

Բաժանորդագին կԱՆԻՍԻԿ՝ Թուրքիայ համար տարեկան 50 զրշ, Ռուսիայ համար 5 ռուբլի, ուրիշ երկրներու համար 10 Ֆր:

Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրութիւնք եւս կ'ընդունուին:

Գաւառներէն Օսմանեան նամակագրով կ'ընդունուին՝ 1 զրշ: նոցը 34 փարայի հաշւով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ:

ԾԱՂԻԿԻ վերաբերեալ ամէն գործի համար Էրմեւ

Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Պ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պոլիս, Պաշէ-Կաթու, Թաշ խան, բիւ 50

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Պ Ի Ր

درعليه ده بفتح قوسنده طاش خاند
ه. نومروده «زاغيك» غزتهسى مدیرى
بالا قاشيان حووان

S'adresser à
HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien «Dzaghik»,
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 29

ՇԱԲԱԹ

2 ՄԱՅԻՍ 1892

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, չաբաթ, Ս. էջմիածնայ մէջ կ'սկսին արդէն Ամենայն Հայոց Հայրապետի ընտրութեան գործողութիւնք: Վեհարանի դահլճին մէջ տեղի կ'ունենայ այսօր հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորաց առաջին ոչ-պաշտօնական ժողովը՝ գործոց վիճակին ծանօթանալու եւ խորհրդակցելու համար: Ս. Պատրիարք Հօր ներկայացուցիչը, Օրմանեան Սրբազան, չպիտի կարողանայ մասնակցել այս ժողովոյ, վասն զի՝ անցեալ չաբաթ երեկոյ մեկնած լինելով մայրաքաղաքէս Մէսսօքի լա-Պոլսօնէ շոգեհաւով, անընդհատ ճանապարհորդելով հազիւ կարող է հասնիլ այս երեկոյ կամ գիշերն եւ կամ վաղն առաւօտ: Սերաստիոյ աշխարհական պատգամաւոր Մեծ. Յովհաննէս էֆ. կիւլալէնիկեանի նոյն իսկ վաղը երեկոյ հասնիլն տարակուսելի է, վասն զի, թէ եւ նոյն շոգեհաւով մեկնեցաւ մայրաքաղաքէս, բայց իւր ամուսինն ի միասին լինելով, բնականաբար չպիտի կրնայ ընթանալ նոյնքան արագութեամբ: Անպաշտօն երկրորդ ժողով մ'ալ այս գիշեր տեղի կ'ունենայ, խորհրդակցութիւնը՝ շարունակելու եւ վերջնական համաձայնութեան մը յանգելու համար:

Վաղը, կիւրաիկէ, մայիս 3, առաւօտուն բոլոր պատգամաւորք, հոգեւորական եւ աշխարհական, կը ժողովին Վեհարանի Դահլճին մէջ՝ կազմելու համար հանդիսաւոր Թափօրը դէպ ի Տաճար: Կ'սկսի զանգակահարութիւնը եւ պատգամաւորք զլոյս զլոյս դուրս կուգան Վեհարանէն: Թափօրին կ'առաջնորդէ Տեղակալ Սրբազանը, իւր աջ եւ ձախ կողմերն ունենալով կառավարութեան ներկայացուցիչն եւ Սինօդի Պրօկուրօրն: Սոցա կը հետեւին Սինօդին անդամները, Առաջնորդները ու Մայր Աթոռոյ Միաբանութեան եօթը պատգամաւորները՝ ըստ աւագութեան ձեռ-

նադրութեան. ապա կուգան աշխարհական պատգամաւորք. ամենէն վերջը՝ Սինօդի ատենադպիրն եւ նորա օգնականք: Վանքի բակը խռնուած կը լինի անշուշտ Վաղարշապատէն, Երեւանէն եւ այլ հեռաւոր քաղաքներէ եկող հետաքրքիր հազարաւոր ժողովրդեան բաղմութիւն:

Թափօրը տաճար մանկելով, եկեղեցական պատգամաւորք կը կանգնին դասին մէջ, իսկ աշխարհականք կը կանգնին Ս. Իշման տեղի առջեւ աջ եւ ձախ կողմերը: Ապա կ'սկսի Ս. Պատարագը: Պատարագիչը պիտի լինի եպիսկոպոս մը:

Հանդիսաւոր Ս. Պատարագէն եւ Թաղաւոր կայսեր ու կայսերական տան բարօրութեան համար դոհաբանական մաղթանք (Մօլիպիճ) կատարուելէ յետոյ, Պատարագիչ Սրբազանը աշխարհական պատգամաւորները կ'երդմնցնէ հետեւեալ երդմնաթղթով.

Երդմնագիր

«Մեք ի ներքոյ անուանեալքս խոստանամք եւ երդնումք յանուն ամենակարողին Աստուծոյ, առաջի Սրբոյ Աւետարանի նորա, առ այն թէ, ցանկամք եւ պարտիմք յայսմ առաջիկայ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարք կաթողիկոսի ամենայն Հայոց վասն զլիաւոր կառավարութեան Սրբոյ Լուսաւորչեան եկեղեցւոյ Հայոց եւ Ծայրագոյն տեսչութեան եկեղեցականաց նորին, ըստ մաքուր խղճի մտաց եւ օրարտուց մերոց առանց իրիք աշխուժեան եւ սեպհական ակնկալութեանց, ի բաց հերքելով ի մէջ զամենայն մախանս թշնամութեան եւ կամ զորպիսի եւ իցէ չաղկապ մերձաւորութեան եւ բարեկամութեան, ընտրել ի միջոյ հոգեւորականաց հայրենի եկեղեցւոյն մերոյ՝ զայնպիսի անձն, զոր ըստ յատկութեանց հանճարոյ եւ խղճի մտացն առաւել ընդունակագոյն համարիմք մեք, եւ յորմէ ակն ունիմք զի ի կատարումն պարտաւորութեանց

իւրոց, զորս դնէ ի վերայ նորա այս վեհ աստիճան հոգեւոր, հանդիսացուցէ նա զինքն ջերմեռանդ պաշտօնեայ Աստուծոյ եւ հոգեւորական տնօրէն բարօրութեան եւ օգտի եկեղեցւոյն Գրիստոսի եւ հաւատացեալ Հայրապետական իշխանութեան նորա ի վերայ բանաւոր հօտին Գրիստոսի: Իսկ եթէ այլ ազգ վարեսցուք, յորժամ իբրեւ անհոգ զօգտէ եկեղեցւոյ եւ ճշմարիտ որդւոց նորին, յորում կայանայ եւ սեպհական օգուտն մեր, ենթադրեմք զանձինս մեր մեղադրանաց եղբայրակցաց մերոց եւ ի հանդերձելումն պատասխանատուութեան առաջի Աստուծոյ եւ անկող դատաստանի նորա, ի վախճան երդմանցս վասն անաշառ ընտրութեան՝ համարուեմք զբան եւ զնաչ Փրկչին մերոյ. ամէն:»

Երդմնեցուցի (Ստորագրութիւն Պատարագիչ Սրբազանին)

Ըստ այսմ երդման երդուածք (Ստորագրութիւնք աշխարհական պատգամաւորաց):

Վաղուան գործն այսքանով կը վերջանայ:

Երկու չաբաթի, մայիս 4, առաւօտուն՝ պատգամաւորք դարձեալ հանդիսաւոր Թափօրով Վեհարանէն եկեղեցի կուգան կաթողիկոսացուաց քառանուն ցանկը պատրաստելու համար: Նիստը տեղի կ'ունենայ դահլիսի: Պատգամաւորք կը բռնեն իրենց յատկացած տեղերը՝ Սուրբ Իշման Տեղի առջեւն մինչեւ աւագ դուռը երկարած սեղանի առջեւ: Հիւսիսային որմնասիւնի տակ կը դրուի Պրօկուրօրի սեղանը: Նախ եւ առաջ Տեղակալ Սրբազանը կ'արտասանէ Տէրունական աղօթքը, եւ երկու սարկաւազներ կը քաղեն «Զգործս ձեռաց մերոց», «Տէր ապաւէն» Սաղմոսը, «Ի մէջ տաճարին», «Սուրբ Սաշիւս» աղօթքներէն յետոյ, Տեղակալ Սրբազանը կը բազմի նախագահական բազկաթուռի վրայ եւ ժողովը կը բանայ ճառախօսութեամբ մը զոր պատգամաւորք կը լսեն յոռնկայս: Ապա ամենքը

կը նստին, և ընտրութեան վերաբերեալ պաշտօնական թուղթերը կարգացուելէ յետոյ՝ գաղտնի քուէարկութեամբ կը պատրաստուի կաթողիկոսացուաց քառանուն ցանկը, և ժողովը կը ցրուի:

Յաջորդ օրը, երեքշաբթի, մայիս 5, պատգամաւորք՝ դարձեալ ի ձայն զանգակահարութեան՝ հանդիսաւոր թափօրով եկեղեցի կը մտնեն, և դռնփակ նստի մէջ յայտնի քուէով քառանուն ցանկին վրայէն կ'ընտրեն երկու կաթողիկոսացուները: Իւրաքանչիւր պատգամաւոր՝ չորս կաթողիկոսացուաց անունները պարունակող թղթի մը վրայ, իւրաքանչիւրին առջեւ, կը գրէ «ընտրեմ» կամ «ոչ ընտրեմ» բառերը: Գրուէ համարը կը կատարուի այսպէս. իւրաքանչիւր անուն առջեւ գրուած թէ՛ «ընտրեմ»ները և թէ՛ «ոչ ընտրեմ»ները կը հաշուին, և այդ կերպով կը հասկըցուի թէ ո՞վ ո՞րքան քուէ չահած է քանի՞ քուէի դէմ: Առաւելագոյն քուէ ստացող եպիսկոպոսը կը հռչակուի առաջին բնօրէն, իսկ անկից անմիջապէս վար քուէ ունեցողն՝ երկրորդ: Անմիջապէս յետոյ արձանագրութիւն կը կազմուի, զոր բոլոր պատգամաւորք կ'ըստորագրեն:

Ընտրական գործերն այսպէս վերջանալէ յետոյ, Սինօդն՝ ըստ օրինի՝ կատարուած ընտրութիւնը կը տեղեկագրէ Կովկասու կառավարչապետին, որ կը հաղորդէ զայն Ինքրագործի՝ Ներքին գործոց նախարարութեան, որու միջոցաւ երկանուն ցանկը կը մատուցուի Թագաւոր Կայսեր՝ առ ի վաւերացումն:

— Ապրիլ 21 ի առաւօտուն Տրապիզոն հասեր է Աւստրիական Լոյտի «Մէմֆիս» չոգենան, ուր կը գտնուէին ապրիլ 18ին մայրաքաղաքէս մեկնող պատգամաւորք, որք են՝ Ս. Երուսաղէմայ եկեղեցական պատգամաւոր Գեր. Սահակ եպիս. Սապայեան և աշխարհական պատգամաւոր Յարութիւն էֆ. Թորոսեան, Նիկիոմիդիոյ առաջնորդ Գեր. Ստեփան եպիս. Յովակիմեան և նոյն վիճակին աշխարհական պատգամաւոր Հաճի Գասպար էֆ. Գասպարեան, Կեսարիոյ առաջնորդ Գեր. Տրդատ Մ. վարդ. Պաւլեան և նոյն վիճակին աշխարհական պատգամաւոր Համբարձում էֆ. Մօսաիշեան, Պուլկարիոյ Հայոց Հոգեւոր հովիւ Գեր. Գէորդ Մ. վարդ. Երէցեան, Եւդոկիոյ և Ամասիոյ Պատրիարքական փոխանորդ Եղիշէ վարդ. Այվազեան և Եգիպտոսի առաջնորդ Գեր. Գէորդ Մ. վարդ. Իւթիւճեան: Նոյն չոգենաւուն մէջ կը գտնուի եղեր նաև Տրապիզոնի նոր կուսակալը, որ ցամաք ելեր է ընդ առաջ եկող պաշտօնէից ուղեկցութեամբ: Ինչ յետոյ ցամաք ելեր են նաև եկեղեցական և աշխարհական

պատգամաւորք, և տեղւոյն քահանայից առաջնորդութեամբ եկեղեցին ու առաջնորդարանն այցելելէ յետոյ, կառավարական պաշտօնատունն ևս գնացեր են նոր կուսակալ Վսեմ. Գառնի պէյի: Ն. Վսեմութիւն սիրալիր ընդունելութիւն ըրեր և հրամայեր է որ իսկոյն տրուին նաև տնցադրերն Ակնայ եկեղեցական ու աշխարհական պատգամաւորաց որք արդէն ի Տրապիզոն կ'սպասէին: Պատգամաւորք 22 ապրիլ, չորեքշաբթի օր հասեր են Պաթում:

— Արաբկիրու Առաջնորդական Փոխանորդ Հայրը՝ Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար՝ իւր կողմանէ փոխանորդ կարգեր է Պալթայեան Արթ. Տ. Ներսէս քահանայն. իսկ վիճակին Գաւառական Ընդհանուր ժողովն աշխարհական պատգամաւոր ընտրեր է Կիւմիւլչիքիւտան Տիգրան էֆ. Ֆէնտին:

— Վանայ Գաւառ. Ժողովն աշխարհական պատգամաւոր ընտրեր է իւր ատենապետը Մանուէլ էֆ. Անանեան, իսկ նորա փոխանորդ՝ ուսուցիչ Պ. Սաչատուր Գարբինեանը: Լիւմ և Կոռնց անապատներու թեմական գիւղացիք և երկու վանքերու միաբանութեան ներկայացուցիչք ի Լիւմ Անապատ հաւաքուելով, եկեղեցական պատգամաւոր ընտրեր են Լիւմ Անապատի միաբան Տիւրեան Արթ. Բարթողիմէոս վարդապետն, իսկ աշխարհական պատգամաւոր՝ Մարկոս էֆ. Նաթանեան: Աղթամարայ Գաւառ. Ժողովն ևս վիճակին աշխարհական պատգամաւոր ընտրեր է յիշեալ վանուց Վանայ գործակալ Մ. Յովհաննէս աղա Պապիկեան. իսկ Ամեն. Սաչատուր Կաթողիկոսն ևս եկեղեցական պատգամաւոր ընտրեր է նոյն վանուց միաբան և իւր եղբորորդի Հայրապետեան Եղիշէ վարդապետն: Հաւանական է որ այժմ իշխածին գլխունին այս պատգամաւորք:

— Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար Պրուսայի Գաւառական Ժողովոյ կողմանէ վիճակին աշխարհական պատգամաւոր ընտրուեցաւ Արձագանգի խմբագիր Պ. Արգար Յովհաննէսեանց: Թէ՛ Պրուսայի Գաւառական Ժողովը թէ՛ Գեր. Առաջնորդն և թէ՛ Ս. Պատրիարք Հայրն այս ընտրութիւնը առանձին հեռագիրներով հաղորդեցին Սինօդին և ընտրելոյն միանգամայն:

— Ռուսիոյ Պետրապոլի թեմէն պատգամաւոր ընտրուեր է Մոսկուա բնակ իրաւաբան Պ. Ստեփան Մամիկոնեան: Նոր-Գաւ և Արձագանգ կը շնորհաւորեն այս յաջող ընտրութիւնը:

— Տնտեսական խորհուրդն իւր երեքշաբթի աւուր նստին մէջ զբաղեցաւ էթմէյտանի վարժարանին, Վանայ

Սանդխտեան վարժարանին և Թօփգաբուի վերաբերեալ խնդիրներով: Նաև, խորհուրդն անհրաժեշտ պէտք տեսնելով ի ձեռին ունենալ մայրաքաղաքի եկեղեցեաց կառնածոց ու անօթներու ցուցակն, որոշեց չրջաբերական մը յղել Թաղ. խորհրդոյ, և իւր անդամներէն Հովուեան Ղազար էֆէնտի յանձնարարեց անձամբ թաղերն այցելելով հաւաքել այդ ցուցակները:

— Կտակաց Հոգաբարձութիւնը՝ վագրձի դրութեամբ նուէր ընելու պատգայից յատուկ հրահանգ մը պատրաստած և Տնտես. խորհրդոյ յղած լինելով, խորհուրդը մանրամասնօրէն նշկատողութեան առաւ և յոյժ օգտակար գտաւ պատրաստուած հրահանգն և որոշեց իւր գործունակութիւնն յայտնել Կտակաց Հոգաբարձութեան:

— Արեւելի մէջ կը կարգամբ.

Սինօդին կողմէ 44 հրաւիրագրեր ղրկուած էին ի Պատրիարքարան, որոց մին անձամբ Կ. Պօլսոյ Ամեն. Ս. Պատրիարքին ուղղեալ ի դիմաց Պօլսոյ թէմին, և 43ը Կ. Պօլսոյ Պատրիարքութեան կախում ունեցող գաւառային թեմօրէից: Նաեւ երեք հրաւիրագրեր Սինօդէն ուղղակի ղրկուած էին Կիլիկիոյ ու Աղթամարայ կաթողիկոսութեանց և Երուսաղէմի Պատրիարքութեան: Ուրեմն, Թուրքիոյ թեմերու կողմէ 94 պատգամաւորներ պարտ էին մասնակցել Հայրապետական ընտրութեան, Կիլիկիոյ կաթողիկոսը չէ մասնակցած, իսկ Աղթամարայ կաթողիկոսն ու Երուսաղէմայ Պատրիարքն իրենց պատգամաւորները ղրկած են: Թուրքիոյ թեմերուն կողմէն եկեղեցական և աշխարհական ընդ ամենայն 41 պատգամաւորք ընտրուած և ճամբայ ելած են: Ասոնց մէջէն 12 անձինք երկերկու թեմի ներկայացուցիչ են, 11 քուէներ ևս նամակաւ ղրկուած են յիշմիածին: Ուստի, Թուրքիոյ թեմօրէից 94 քուէներէն 64ը ուղղապէս կամ նամակաւ պիտի կրնան մասնակցել ընտրութեան, և ըստ կը մնան 30 քուէներ: Հաւանական է որ ընտրեալ 41 պատգամաւորներէն մէկ երկու անձինք ևս չկարենան անձամբ մասնակցել և իրենց կողմէ կամ փոխանորդ կարգեն և կամ քրուէնին նամակաւ հաղորդեն:

— Սպահանի և Հնդկաստանի թեմակալ Գեր. Եսայի եպիսկոպոս՝ Կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու համար իւր կողմէն իշխածին ղրկած էր ծերունի Սաչատուր Մ. վարդապետը, որ կանուխէն իշխածին հասնելով՝ կ'սպասէր մայիս 3 ընտրութեան: Այժմ թէ՛ հրահանգն Նոր-Գաւի կը հեռագրեն թէ՛ Եսայի Սրբազան յիշեալ վարդապետը ղրկեր է իւր կողմէն ընտրու-

թեան մասնակցելու իրաւունքէն՝ հաշուական խնդրոյ մը համար քննութեան ենթարկելով զնա, և իւր կողմէն քուէ-արկելու իրաւունքը տուեր է Սինոդի Ատենապետի Տեղակալ Գեր. Երեմիա Եպիսկոպոսին:

— Նոր-Վարի մէջ կը կարգամք. «Թիֆլիսում ստացած մասնաւոր նամակից իմանում ենք որ Թէհրան է գնացել Համարաճում Առաքելեան Շուշեցի մի պարոն և աշխատում է որ ինքը լինի այն կողմի պատգամաւորը, բայց դեռ յաջողութիւն չէ գտել: Այդ մասին գիտել են էջմիածին, որպէս զի գործը գլուխ գայ:»

— Արեւելի մէջ կը կարգամք. Կ. Պոլսէն՝ ապրիլ 15, չորեքշաբթի առաւօտ ուսումական «Ազոֆ» շաբեանում մեկնող առաջին պատգամաւորները, Գեր. Մեսրոպ Եպիսկոպոս Սուքիասեան՝ առաջնորդ Ագր. Պոլսոյ և նոյն վիճակին աշխարհական պատգամաւոր Մաքսուտ էֆ. Սանտալճեան, Գեր. Հմայեակ Եպիսկոպոս Դիմաքսեան՝ առաջնորդ Ռոստոմոյի և նոյն վիճակին աշխարհական պատգամաւոր Տոքթ. Յակոբ էֆ. Նէվրուզեան, Գեր. Ներսէս Մ. վարդապետ Ասլանեան և նոյն վիճակին աշխարհական պատգամաւոր Գարեգին էֆ. Բաբազեան, և Երզնկայի առաջնորդ Գեր. Յովհաննէս Մ. վարդապետ Արշարունի, ապրիլ 19, կիրակի օրը Պաթում ժամանեք են, ուր կը գտնուէր արդէն Կ. Պոլսոյ աշխարհական պատգամաւոր Տիգրան էֆէնտի Կիւմիւշկէրտան: Տեղւոյն քահանայք և ազգայնոց խումբ մը շոգեհաւ երթալով դիմաւորեք են զանոնք և ուղղակի եկեղեցի առաջնորդեք են, ուր ներկայ գտնուեք են պատարագին: Գեր. Հրմայեակ Սրբազան քարոզ խօսեք է: Յաւարտ եկեղեցական արարողութեանց, պատգամաւորք խմբովին այցելութիւն տուեք են քաղաքին օսմ. հիւպատոս Վսեմ. Պէհա պէյին որ մեծարանօք ընդունեք է զանոնք: Կիրակի ցերեկ և գիշեր հացկերոյթք տրուեք են ի պատիւ պատգամաւորաց օրք յաջորդ օրը, երկուշաբթի, 20 ապրիլ, առաւօտեան կառախումբով Թիֆլիս ուղևորեք են:

— Վաղը, կիրակէ, Տօն Երեման Ս. Խաչի, Ամեն. Տ. Մեղիսեղեկ Սըրբազան Արքեպիսկոպոս Մուրատեանց հանդերձեալ է Ս. Պատարագ մատուցանել Գուրուչէշէի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ: Գիշերը պիտի հիւրընկալուի ի Պէշիկթաշ Տէր-Յակոբեան Մեծ. Կարապետ էֆէնտի բնակարանը:

— Սմբատ Շահազիզեանի յորեկեանը նորա նախկին աշակերտները տօնեք են նաև ի Բագու և իրենց ուսուցչին ի պատիւ հիմնուելիք դրականական դը-

րամագլխոյն համար 1,110 բուրլի հանգանակեք են:

— Թիֆլիսի քահանայներէն Տէր Սարգիս Բլգնազարեանց վերջերս «Համառօտ քրիստոնէական վարդապետութիւն» մը թարգմանելով ռուսերէնէ ի հայ, տպագրութեամբ ի լոյս ընծայած էր՝ կողքին վրայ «Ըստ դաւանութեան Հայոց առաքելական ուղղափառ սուրբ եկեղեցւոյ» արձանագրեալ, և այս առթիւ քննադատութիւններ և բողոքներ երևցած էին Թէ՛ Նոր-Վարի և Թէ՛ Արձագանգի մէջ: Այժմ նոյն լրագիրներէն կ'իմանամք թէ, Սինոդի անդամ Արիստակէս Եպիս. Սեդրակեան քննելով այս գիրքը, վաւերացուցեք է «Իրեւ Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ հոգւոյն համաձայն մի շարադրութիւն»:

— Հայերէնագլխո ուսուցչապետ Սոֆոն Բուգգէ (Bugge), որ իւր ընտիր երկասիրութեամբ ծանօթ է եւրոպացի արեւելագիտաց և լեզուաքննին ուսումնականաց, իւր երկու նոր երկասիրութեանց նկատմամբ տեղեկութիւն կուտայ առ մեզ ուղղութեամբ նամակաւ մը: Ի մէջ այլոց կը գրէ ուսուցչապետն. — «Հայերէն լեզուի իմ ունեցած հմտութիւնս շատ տկար է և թերի. աշխարհաբար հայերէն աւելի դժուարութեամբ կը հասկնամ քան գրաբար: Հայերէնի վրայ գրելու կը համարձակիմ միայն այն պատճառաւ որ այս գարմանալի լեզուն հնախոյզ եւ լեզուաքննին գիտնոց շատ քիչ ծանօթ է եւ շատ քիչ հետազոտուած: Պրուկմանի (Brugmann) եւ Շթրայթպէրի (Streitberg) ձեռք հրատարակուող «Հնդկ-գերմանական Բնութիւնք» գրութեան մէջ իմ փորձրիկ մէկ յօդուածս պիտի լոյս տեսնէ մօտեքս, որուն մէջ փորձ մ'ըրած եմ ի մէջ այլոց ստուգաբանօրէն մեկնելու հայ լեզուին Ընդունելութիւն-Ներկան եւ Միջական կառարեալը: Այժմ զբաղած եմ եգիպտական մուսիայի երէզներուն վրայ գտնուած ետրուսկերէն մեծ արձանագրութեան քննութեամբ: Իմ «Ետրուսկերէն եւ Հայերէն» անուն գրութեանս մէջ հաստատած եմ այն կարծիքը՝ թէ Ետրուսկերէնը շատ մերձակայ է հայ լեզուի. մանաւանդ թէ կրնայ հին հայերէնի շատ տարբերող մէկ գաւառաբարբառը համարուի: Կը յուսամ որ այս կարծիքս մուսիայի երէզներուն վրայ արձանագրութեամբ անժխտելի կերպով պիտի ապացուցուի»

(Հանդէս Ամստերդամ)

— Պոլսոյ եկեղեցական պատգամաւոր Գեր. Մաղաքիա Եպիս. Օրմանեան չորեքշաբթի օր միջօրէին մօտ Պաթում ժամանեք է: — Ապրիլ 18ի շաբաթ օրը մայրաքաղաքէս մեկնող եկեղեցական և աշխարհական պատգամաւորք ապրիլ 29ի չորեքշաբթի օրը Ս. էջմիածին հասեք են:

— Կաթողիկոսական ընտրութեան համար Ռուս կառավարութեան կողմանէ ներկայացուցիչ կարգուեք է պետական գաղտնի խորհրդական Պ. Ն. Պրիպիլ, որ ինչպէս յայտնի է՝ 1885ի կաթողիկոսական ընտրութեան միջո-

ցին ևս նոյն պաշտօնով էջմիածին եկած էր:

— Վաղն առաւօտ՝ Գատը-գիւղի Ս. Թագաւոր եկեղեցւոյն մէջ պիտի պատարագէ Պատրիարքական Փոխանորդ Գեր. Գաբրիէլ Մ. վարդ. Ճէվահիրճեան:

— Արժ. Տ. Նիլշէ քահանայ Փաւստեան ուղևորած է իւր հայրենիքն Մալին Գարահիսար՝ անդ պաշտօնավարելու համար:

— Եէնի-գարուի հրկիզեցոց նպաստները պիտի բաշխուին յառաջիկայ երկուշաբթի, 4 մայիս, ժամը 5ին, Եէնի գարուի Թաղական Խորհրդարանին մէջ: Կալուածատեարց անձամբ ներկայութիւն հարկ է, իրենց հետ ունենալով իրենց կալուածոց պաշտօնական թուղթերը:

— Եւգոկիոյ աշխարհական պատգամաւոր Յովհաննէս էֆ. Գալաքճեան չկրնալով երթալ էջմիածին, Գաւառական ժողովը պատգամաւոր ընտրեք է Կիւմիւշկէրտան Տիգրան էֆէնտին, որուն հեռագրով հաղորդեք է զայս ընտրութիւն:

— Գպրոցասէր Տիկնանց ընկերութեան ԱՅԴ տարեգարծը տօնուեցաւ երէկ ի Գուճգարու, ընկերութեան վարժարանին մէջ, յետ յատուկ պատարագի որ առաւօտուն մատուցուեցաւ Գուճգարուի դրսի Ս. Յարութիւն եկեղեցւոյն մէջ, ի ներկայութեան վարժարանին խնամակալուհեաց, ուսուցչուհեաց և աշակերտուհեաց: Հանդիսին կը նախագահէր Պատր. Փոխանորդ Գերապաւի Տ. Գաբրիէլ վարդ. Ճէվահիրճեան: Ներկայ էին այլ եկեղեցականք, յատկապէս հրաւիրեալ աշխարհականք և ծնողք: Հանդէսն սկսաւ «Ով հայր մեր Հայր» արթթում, ուրկէ յետոյ արտասանուեցաւ Ամեն. Մեղիսեղեկ Սըրբազան Մուրատեանցի «Ով ազնեալ ինձ» քերթուածն: Երեք աշակերտուհիք արտասանեցին խրատալից տրամախօսութիւն մը զոր յաջող կերպիւ յօրինած էր վարժարանին Դ. կարգի աշակերտուհիներէն Օր. Յուլիանէ Սարգիսեան: Ուրիշ երկու աշակերտուհիք արտասանեցին գաղղիերէն լեզուաւ երգախառն տրամախօսութիւն մը, ի մէջ այլոց, երգուեցաւ Վեհ. Սուրբանին ձօնեալ մաղթերգ մը, միշտ ընկերակցութեամբ զաշխարհի զոր կ'ածէին աշակերտուհիք և ջութակի զոր կ'ածէր իրենց ուսուցիչն Պ. Իէբիսօ: Հանդէսը փակեց Պատր. Փոխանորդ Հայրն գեղեցիկ բանախօսութեամբ մը:

— Սինոդի անդամ Բարթոլոմէոս վարդ. Դէորդեան ապրիլ 2ին բարձրագոյն հրամանաւ արձակուելով իւր պաշտօնէն, Սինոդի նոր անդամ նշանակուած են Նուխիի առաջնորդական փոխանորդ Վահան վարդ. Տէր. Գրիգորեանց և էջմիածնայ վանական Կառավարութեան անդամ Ներսէս վարդապետ Հայկազունին: Այս փոփոխութեան յետոյ Սինոդին մէջ տեղի ունեցէր է՝ Մարտի 8ի Թիֆլիսի թեմական պատգամաւորի ընտրութեան բեկանումը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ե Ն Ո Վ Ք Ա Ր Տ Ը Ն

(Enoch Arden)

Լորտ Թէննիսըն՝ Անգլիոյ ներկայ պատկառու բանաստեղծն էր մեր վերջին յօդուածի նիւթն: Իւր համառօտ գրութեանց մէջ անկարելի պիտի լինի թերևս գտնել «Enoch Arden» է աւելի սիրուն և հրապուրիչ քերթուած մը: Բանաստեղծական նորավէպ մ'է այն. վսեմն և հետաքրքրաշարժ միացեալ են անդ: Կը փորձեմ համառօտիւ գծել աստ այդ քերթուածի ուրուագիծն, յուսալով որ ընթերցողներէս անոնք որ առիթ ունին, կը կարդան զայն ի բնագրին, որմէ միայն կարելի պիտի լինի ուղիղ գաղափար մը կազմել այդ քերթուածի մասին:

Ծովափին վրայ կը խաղան երեք տղաք, Աննիկ՝ դիւզին ամենէն գեղանի աղջիկն, Փիլիպպոս՝ Աղօրեպանին միակ զաւակն, և Ենովք՝ կոշտ նուաստի մը մանչը: Աւագէ դղեակներ կը շինեն, նոցա աւերումը կը դիտեն, օրերն այսպէս կ'անցունեն հեշտօրէն, աւագին վրայ ձգելով իրենց փոքր ոտից հետքերն, զորս ծովուն ալիքները կը լուսին շարունակ: Նեղ քարայր մը կար ժայռի մը տակ. հոն այս տղայք «տուն պահուկ» կը խաղային. Ենովք կը լինէր տան տէրն՝ օր մը. Փիլիպպոս՝ հետեւեալ օրն, մինչ Աննիկ էր տանտիրուհին:

Ենովք երբեմն կ'ըսէր. «այս իմ տունն է, և այս ալ իմ փոքրիկ կինս»: «Իմն ալ կը յարէր Փիլիպպոս. երբեմն իրարու հետ կուռի կը բռնուէին մինչև որ Աննիկ կը միջամտէր խնդրելով որ իրեն համար չկուռին, ինք երկուքին միանգամայն կին կը լինի: Բայց երբ քաղցր մանկութեան արշալոյսն անցնելով, կենաց բարձրացող արեգակին նոր տաքութիւնն զգալի եղաւ, յայնժամ իւրաքանչիւրին սիրտը այդ միակ աղջկան համար կը փափախէր: Ենովք կը բռնայ իւր սէրը. Փիլիպպոս լռելեայն կը սիրէ. աղջիկն աւելի գթաւոր կ'երևի Փիլիպպոսին, այլ կը սիրէ զԵնովք, թէև չգիտէ ի՞նչու:

Ենովք միակ նպատակ մը ունէր այժմ, կարելի եղած դրամը խնայելով, իրեն նաւ մը գնել և Աննիկին ալ տուն մը շինել: Եւ իրօք Ենովքին բաղդը յաջող էր, զի հազիւ հասած էր իւր 21^{րդ} Մայիսն և արդէն իսկ գնած էր իրեն սեփական նաւակն և Աննիկի համար ալ շինած էր տուն մը, աղօրիքը տանող նեղ ճամբուն վրայ:

Աննան զուարթ երեկոյ մը ըստ տե-

ղական սովորութեան՝ սմբողջ գիւղացիք ընկող ժողովելու կ'երթան: Փիլիպպոս ժամ մը ետ կը մնայ՝ հիւանդ հայրը իրեն պէտք ունենալով. բլրին գագաթը կը մագլցի և անտի կը տեսնէ Ենովքն ու Աննիկը ձեռք ձեռքի նստած անտառին մէկ հանդարտիկ մասին մէջ. իւր մեծ թուխ աչերը կը վառին լւին և սուրբ կրակով մը որ կ'այրէր իբրեւ թէ խորանի մը վրայ: Նորէն կը նայի Փիլիպպոս վարի տեսարանին վրայ և անոնց աչաց և դիմաց մէջ կը կարգայ իւր դատաւիճիւնն: Վայրկեան մ'եւ և ահա կը նշմարէ որ անոնց երեսներ իրարու կը մօտենան. կը հառաչէ՝ մէկ կողմ կը քաշուի և վիրաւորեալի մը նման կը սողակի անտառին մէկ անկիւնն: Մինչ մը նացեալ կը զուարճանային, Փիլիպպոս կ'երէն ու կը հեռանայ՝ սրտին մէջ կըրելով սիրոյ քաղցը:

Այսպէս՝ կ'ամուսնանան Աննիկ և Ենովք. ցնծութեամբ կը հնչեն զանգակներն. երջանկութեամբ կը սահին տարիներն, եթէ երջանիկ տարիներ սիրոյ և առողջութեան: Աղջիկ մ'էր իրենց անդրանիկ զաւակն, որուն առաջին լացին հետ հայրը կ'որոշէ տալ նմա լաւագոյն կրթութիւն մը քան զոր ունեցած էր ինքն կամ իւր կիներ: Երկու տարի ետքը կուգար մանչ զաւակ մը, սիրուն հրեշտակ մը մօրը մենակեցութեան մէջ:

Բաղդին անիւը կը դառնայ այժմ, իրերը կը փոխուին: Նաւահանգիստէն քիչ մը հեռու նաւին կայմին վրայ մագլցած պահուն դիպուածով մը կը սահի Ենովք, սրունքը կը կոտրէ, և իւր անկողնոյ ծառայած միջոցին կինը ծընունդ կուտայ հիւանդոտ զաւակ մը: Քաջ և բարի մարդ մ'էր Ենովք, և սակայն կենաց այս մթին ժամերուն մէջ չէր կրնար մտքէն հեռացնել տխուր խորհուրդներ. կ'երևակայէր իւր սիրատուն զաւակաց թշուառութիւնն և սիրելի կնոջը խեղճութիւնն, ու իսկայն կը բարձրացնէ «Փրկէ՛ր զանոնք այդպիսի վիճակէ մը, ինչ որ ալ լինի իմ ճակատագիրս» աղօթքը: Նաւապետը լաւ կը ճանչէր զնա և քաջ գիտէր նորա արժանիքն, ուստի առանց վարանելու կ'առաջարկէ հիւանդ նաւաստիին ընկերանալ իրեն և մի քանի շաբաթէն նաւարկել ի Զինաստան: Ենովք իսկոյն կ'ընդունի առաջարկն:

Դժբաղդութիւնն այնքան մեծ չէր երևեր իրեն այժմ. բայց կը խորհէր շարունակ կնոջը և զաւակացը ապագայն: Նաւակը ծախել և աեոր դրամովն աւարանք գնել: Աննիկը գործի գնել, որպէսզի կարենայ տուն պահել իւր բացակայութեանը, այս տեսակ խորհուրդներ կը գրաւէին Ենովքի միտքը: Զի-

նաստանի ճամբորդութենէն հարուստ վերադառնալու յոյսն ունէր. և այդու կարող պիտի լինէր զաւակացը լաւ դաստիարակութիւն մը տալ և կենացը մը նացեալ օրերն խաղաղութեամբ անցունել իրեններուն քով:

Այս որոշմամբ տուն կը դառնայ Ենովք: Իւր որոշումն յաջորդ առաւօտուն միայն կը փորձէ պարզել Աննիկի: Աննիկ կը թախանձէ, կ'աղբբոսէ ամուսինն իւր նպատակէն ետ կեցնելու համար: Ենովք կը պատճառաբանէ ցուցնելով թէ իրեն և զաւակացը սիրոյն համար է որ յանձն կ'առնուր այսպէս հեռանալ տունէն: Սէրը տեղի կուտայ կամքին: Ենովք կը ծախէ ծովի հին բարեկամն, Աննիկի համար կը գնէ կարասիք և ապրանք:

Հրաժեշտի առաւօտը կը հասնի: Ենովք աստուածավախ մարդ էր. կը խոնարհէ գլուխն և օրհնութիւն կը հայցէ Աննիկի և զաւակացը համար: Աննիկի դառնալով կ'ըսէ. «Մաքուր սիրտ մը և մաքուր կրակ մը պահէ ինձ համար, ես չուտով պիտի վերադառնամ, սիրելիս»: Հիւանդոտ զաւակն գլուխն գգուելով կը յարէ. «Աստուած օրհնէ զնա, վերադարձիս հեռաւոր վայրերու պատմութիւնները պիտի ընեմ իրեն»: Ենովք կը կանգնի. կ'ողջագուրէ նուազելու մօտ եղող կիներ, կը համարէ իւր փոքր զաւակներն: Աննիկ իրեն կուտայ փոքրիկ գանգուր մը հիւանդոտ տղեկին մագէն: Ենովք աճապարանօք կ'առնու ծրարն, ձեռքը կը ծածանէ և կը հեռանայ:

Աննիկ չյաջողի իւր նոր արհեստին մէջ. սակարկութեան անվարժ, սուտ խօսելու անկարող, ստացուածքին մեծ մասն քիչ առնէն կը ծախէ աժան գըներով: Հիւանդոտ տղեկը կը մեռնի: Այդ միւսնոյն շաբթուան մէջ որ Աննիկ կը թաղէր իւր փոքրիկն, Փիլիպպոս պարտք կը սեպէ երթալ և մխիթարել վշտակիր Աննիկը: Փիլիպպոս կ'երթայ Աննիկի տունն, ուր կը գտնէ զնա առանձին և սգակիր: «Ենորհք մը խնդրել եկայ», կ'ըսէ Փիլիպպոս զգայուն շեշտերով. «Թոյլ տո՛ւր ինձ կատարել Ենովքի փափաքն լաւ դաստիարակութիւն մը տալով իւր զաւակացը: Ես հարուստ եմ և դիւրաւ կրնամ հոգալ զաւակացդ բոլոր պէտքերն, և եթէ ուզես, Ենովք վերադարձին կը վճարէ ինձ ի՞նչ որ ծախսեմ զաւակացը կրթութեանը համար. մեղք է որ տղայքը այսպէս անկիրթ մեծնան»: Աննիկ կը վարանի պահ մը. յետոյ կը հաւանի: Փիլիպպոս զպրոց կը գնէ աղջիկը և մանչը, անոնց բոլոր ծախքերը կը հոգայ և անոնց միջոցաւ ալ յաճախ տուն կը ղրկէ ուտելիք և ալիւր իւր աղօրիքէն: Տղայք հայր

կը կոչեն պինճն. Փիլիպպոս ամէն ի՛նչ էր իրենց համար, Փիլիպպոս կը չահէր, Ենովք կը կրօնեցնէր:

Երեկոյ մը տղայք իրենց մօրը հետ անտառը ընկող ժողովելու կ'երթան. տղայոց թախանձանօք «Հայր Փիլիպպոս» եւս կ'ընկերանայ իրենց յօժարաւոր: Անտառին ծայրը կը հասնին. Աննիկ յոգնած լինելով՝ կը նստին անդ. տղայք ասդին անդին կը վազվաւտեն: Աննիկ և Փիլիպպոս անտառին են: Երկար լռութենէ մը վերջ Փիլիպպոս կը բանայ խօսքը և սիրտը. «Աննիկ», կ'ըսէ, «ամէն հաւանականութենէ և յոյսէ դուրս է սպասել որ տասը տարի առաջ քեզմէ հեռացող մէկը վերադառնայ օր մը. կը ցաւիմ քեզ տղաւոր տեսնելուս. կ'ուզեմ օգնել, այլ չեմ կրնար օգնել ուղածիս չափ. կ'ուզեմ որ իմ կինս լինիս դու. Խորհէ ըսածիս վրայ. հարուստ եմ. գիրար կը ճանչենք երկար ատենէ ի վեր և ես սիրած եմ քեզ ի տղայութենէ»: «Իրօք պահապան հըրեշտակ մ'ես» դու մեր տան համար, Փիլիպպոս. Աստուած օրհնէ քեզ բարութեանը համար: Բայց կարելի է սիրել երկու անգամ. սպասէ, սիրելի Փիլիպպոս, կարելի է Ենովք կը վերադառնայ», կը պատասխանէ Աննիկ. «Գիտեմ թէ Ենովք չափաւր վերադառնայ», կ'աւելցնէ Փիլիպպոս. «Բայց կ'սպասեմ տարի մ'եւս, այսքան տարիներ սպասել վերջ»:

Տարին կ'անցնի. Աննիկ ամիս մ'ես կը խնդրէ, և այդ ժամանակամիջոցի լրանալուն խօսքը պահելու որոշում կուտայ, համազելով ինքզինք թէ ուղիղ ընթացքի մը կը հետևէր. Գիւղին մէջ արդէն իսկ այլ ընդ այլոյ լուրեր տարածուած էին:

Կ'ամուսնանան սոքա. գիւղին զանգակները կը հնչեն ցնծութեամբ, բայց Աննիկի սիրտը չէր բաբախեր ցնծութեամբ: Տեսակ մը անհանգստութեան մէջ էր Աննիկ, մինչև որ երկրորդ ամուսնութենէն ունեցած զաւակը բոլորովին մուգնել կուտայ իրեն՝ անցեալը: Փիլիպպոս այլ ևս ամէն ինչ էր իրեն համար:

Ուր էր արդեօք Ենովք: Չինաստան հասնելով անդ դրամ չահելէ վերջ վերադառնալու կը պատրաստուէր Ենովք. զաւակացը համար խողովիկներ գնել իսկ չմոռնար: Հայրենիք վերադարձին նսկայն, նաև փաթորիկ բռնուելով կ'ընկըղմի. Ենովք և երկու ընկերները միայն կ'ազատին նաւաբեկութենէ և կ'իյնան անմարդաբնակ կղզոյ մը ափանց վրայ: Ենովքի ընկերք կը մեռնին. իւր վիճակն աննախանձելի և դառն էր. տուն դառնալու յոյսն մարած չէ սակայն իւր սրտէն: Տարածամապէս ճեր-

մակ գլխուն վրայէ կ'անցնին արևոտ և արևոտ եղանակներն տարուէ տարի. առաւօտէ մինչև իրիկուն ծովու վրայ առաքաստանաւ մը տեսնելու անյաջող փորձերով կը սահէին օրերն:

Եւ օր մը՝ ըստ սովորութեան՝ կղզւոյն բլուրներէն միոյն վրայ ելած ատեն, հեռուէն կը նշմարէ առաքաստանաւ մը, որ ճամբան կորսնցնելով կղզւոյն ծովախորշերէն միոյն մէջ ապաստանած էր: Ենովքի ուրախութիւնը կ'աւելնայ ի տես նաւաստեաց որք կ'ուզային ջրոյ աղբիւր մը գտնելու համար: Ենովքի երկար մագերն, երկար մօրուքն և պատառատուն լաթերն կէս-վայրենւոյ մը երևոյթն կուտային իրեն: Նաւաստեաց մօտեցալով կ'առաջնորդէ զանոնք մինչև որ կը հասնին աղբիւրն: Ենովք ձեռաց նշաններով և հազիւ հասկընալի բառերով իրենց ընկերանալու փափաքը կը յայտնէ. նաւաստիք չեն ուզեր մերժել խնդիրքը, թէ և կը հաւատան թէ խեղճ մենակեացն ապուշ մը և կամ յիմար մը լինելու է: Նաւապետն մեծապէս կը հետաքրքրի Ենովքի դառնաղէտ պատմութեամբն և ցամաք կը հանէ զնա Անգլիոյ մէկ եզերքն՝ իսկ և իսկ այն նաւահանգիստն ուսկից մեկնած էր Ենովք: Ցամաք ելնելուն պէս Ենովք լուիկ միջիկ կը քալէ դէպ ի տուն, սրտատրոփ կ'անցնի իրեն ծանօթ հին փողոցներէն և յուզման մէջ կանգ կ'առնու. քարաչէն փողբիկ տան մը առջև, ուր երբեմն կը բնակէր և կը սիրէր Աննիկ: Այդ տունն ամայի էր այժմ:

Ծովեզերքին մօտը՝ պանդակի մը մէջ կը հաստատէ Ենովք իւր առժամանակեայ բնակութիւն, մի և նոյն ատեն կը նոյն և զաւակացը նկատմամբ տեղեկութիւն առնելու յոյսով: Ծերունի պանդակապետուհին՝ իւր սեռին յատուկ պատրաստարանութեամբ՝ կ'սկսի պատմել տեղական հին և նոր անցքերն: Կը պատմէ դժբաղդ նաւաստիի մը դէպքը, զաւակին մահը, ամուսնոյն աղքատութիւնն և վերջապէս ներա Փիլիպպոսի հետ ամուսնանալն: Մեծ դժուարութեամբ միայն կը յաջողի Ենովք չմոտենել ինքզինք:

Բայց Ենովք կ'անձկար տեսնել տնգամ մ'ես Աննիկի դէմքը և գիտնալ թէ երջանիկ է նէ: Նոյեմբերի օրուայ մը վերջալուսին կ'որոշէ երթալ և կերպով մը տեսնել Աննիկը. Փիլիպպոսի տան ճամբան կը բռնէ. մէն մի քայլափոփի հետ կը փոխուին և իւր սրտի յոյսերն: Պարտիզին պատին վրայէ ծառերուն մէջ կը տեսնէ Փիլիպպոսը՝ մանկիկ մը ծընգացը վրաց. երկրորդ հօրը ուսին վրայ յետած է. աղջիկ մը բարձրահասակ և գեղանի. մայրը իւր փողբիկին տուած էր ամբողջ ուշն. քովիկը կանգնած էր

բարձրահասակ և զօրաւոր զաւակն: Սարսուռ մը կ'ըզգայ Ենովք՝ տեսնելով օտար մը տէր իւր իրաւանց և իւր զաւակացը սիրոյն: Չէր ուզեր սակայն վերել նոցա երջանկութիւն. կը հեռանայ և կ'որոշէ լռել և բան մը չըսել Աննիկի:

Կը հիւանդանայ Ենովք. կ'զգայ թէ ապրելու քանի մը օր միայն ունէր. իրեն կը կանչէ պանդակապետուհին, Գրքին վրայ երգում ընել կուտայ թէ իրեն ըսելիքը մէկու մը չյայտնէ մեռնելն առաջ, և արցունքներու և հառաչանաց մէջ կը շարունակէ. «Երբ տեսնես Աննիկը, ըսէ՛ իրեն թէ մեռայ զինք օրհնելով. իրեն համար աղօթելով և զինք սիրելով. Ըսէ՛ իմ աղջկանս թէ՛ վերջին շունչովս օրհնեցի զինքը և աղօթեցի իրեն համար. Ըսէ՛ մանչուս թէ՛ մեռայ զինքը օրհնելով. Ըսէ՛ Փիլիպպոսի թէ զինքն եւս օրհնեցի: Եթէ զաւակունքս կ'ուզեն տեսնել իրենց մեռած հայրը, թող գան դագաղիս քով, այլ ոչ Աննիկ, զի իմ մեռեալ դէմքս պիտի խայթէ իւր սիրտը. Եւ արդ, իմ արիւնէս միայն մէկը կայ որ պիտի ողջագործէ զիս հանդերձեալ աշխարհին մէջ. այս մազը անորն է. Աննիկ իւր ձեռքովը կարեց և ինձ տուաւ մագի այս գանգուրն, զոր տարիներէ ի վեր պահած եմ. իրեն տո՛ւր զայս, թերեւս այդու միտքարուրի և յիշէ թէ ես եմ ան»: Պանդակին մէկ աննշան խորշին մէջ իւր հագին կը փչէր Ենովք երեք օր ետքը:

Այսպէս անցաւ դիւցապն հոգին. գիւղին համար նմանը չտեսնուած հանդիսաւոր յուղարկութեամբ թաղեցին զնա:

Հոնոն

Հ. Յ. Ս.

Նիքոլա Անտրիովիչ

Լ Ա Ի Ս Ա Ն Կ Ա Ր Ի Չ

Ի Պոլիս, Լուիթան Պայագիս,

Քեօքճիլէր պաշը, Թիւ 99

Լուսանկարչատան մէջ կը պատրաստուին ամէն տեսակ լուսանկարներ. Եւրոպայէ նոր հասած բազմաթիւ նորահար գործիչներով: Պ. Ն. ԱՆՏՐԻՈՎԻՆՅՈ ինքն անձամբ կը հանէ իւր բազմաթիւ յաճախորդաց պատկերները: Յաճախորդներն կատարելապէս գոհացնելու համար, յանձնարարուած լուսանկարներու ՕՐԻՆԱԼը ցոյց կը տրուի նախապէս, և եթէ չհաւանուի, կրկին և կրկին անգամ կը լուսանկարուի, մինչև որ հաւանուի. զիջողութիւն մը զոր մայրաքաղաքիս ոչ մի լուսանկարիչ յանձն կ'առնու: Կ'ազգարարեմք մեր բազմաթիւ յաճախորդաց որ ինչպէս յոտակ և պայծառ օրեր, նոյնպէս և ամպոս և մառախլապատ օրեր լուսանկարը կը հանուին ամենայն յաջողութեամբ չնորհիւ նոր դիւտերու:

Կը խնդրուի գգուշանալ կարգ մը նորեկուկ լուսանկարիչներէ որք կը գործեն մեր անուամբ:

4—12

ԹՈՒՔԱՆՏԻՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Շար. եւ վերջ նախորդ քիւէն)

Բանն այսպէս էր. ի Մենտոնա մի ամիս անցունելէ յետոյ, մի անգամ ես սանդուխներէն վեր կը բարձրանայի դէպ ի սենեակս, և ըստ սովորականին, կանգ կ'առնէի իւրաքանչիւր աստիճանի վրայ, դժուարութեամբ շունչ քաշելով. ինձ մօտեցաւ մի բարեհոգի անգլիացի ծերունի Պ. Հոսսէտ և ըսաւ որ թէպէտ և ինքն իւր կնոջ հետ միասին երգում են այլ ևս խորհուրդ չտալ, որովհետեւ ոչ ոք կարեւորութիւն չտար, բայց և այնպէս ծերունոյն համար շատ ծանր էր նայիլ ինձ. նա կրկին անգամ կը վճռէ փորձել՝ բոլորովին ապացուցանելու, որ իրենց ըսածը ճշմարտութիւն է: Մենք նստանք սանդուղքի սրահակի վրայ և ծերունին պատմեց ինձ, որ 10 տարի առաջ իւր կինը պիտի մեռնէր՝ Լոնտոնի բոլոր երեւելի բժշկաց կարծիքով, որոնք կը պնդէին թէ կնոջ թոքերը վարակուած են քիւբերկլիներով: Նա այնքան թոյլ էր, որ չէր կարող պտըտիլ, այլ բռնած կը տանէին զինքը: Մի կողմ թողով Լոնտոնի բժշկաց վճիռը, ծերունին իւր կինը կը տանի Բարիդ Այնտեղ եւս բժշկանքը հաստատեցին նոյն վճիռը և վերջնականապէս ըսին որ եթէ կ'ուզէ որ մի քանի ամիս երկար տեւէ կնոջ կեանքը, պիտի տանի զնա յԱլքէր: Այս տեսակ մի վճիռ անկարելի եղաւ կնոջմէն ծածուկ պահել և նա իբրեւ խելացի մի կին, աւելի լաւ համարեց մեռնիլ տանը մէջ. Այսպէս, փոխանակ Ալքէր երթալու, նոքա դարձան Լոնտոն՝ իրենց տունը, նոյեմբեր ամսոյ ամենազգուելի եղանակին: Ի Լոնտոն նոքա մի նամակ ստացան իրենց մէկ ազգականէն որ իրենց կը յայտնէր թէ՝ չնայելով որ մի ժամանակ թոքախտ է ունեցեր, բայց այժմ զօրախումբ կը կառավարէ, որով նա երախտապարտ է բժիշկ Չէրչլին, որ ի Լոնտոն հիւանդանոց ունի կրծկացաւ ունեցող հիւանդաց համար: Ամենազգույշ մարդ լինելով՝ Պ. Հոսսէտ բժշկաց խորհուրդ կազմեց, որոնք առանձինք իւր կինը կը դարմանէին, և այս խորհրդի մէջ բոլոր բժիշկները միաձայն հաստատեցին թէ բժիշկ Չէրչլը ծաւալան է:

— Որովհետեւ թէ՛ ի Լոնտոն և թէ՛ ի Բարիդ կինս մահու դատապարտած են ոչ-չարադան բժիշկներ, կ'ըսէ Պ. Հոսսէտ, ուստի ինձ ուրիշ բան չմտաւ ընել եթէ ոչ դիմել ծաւալանին: — Այսպէս յայտնեց նա բոլոր բժշկաց և տարաւ կինը Չէրչլի մօտ:

Չէրչլի ընդունելութիւնը մանրամասնօրէն նկարագրելէ յետոյ, ինքը Պ.

Հոսսէտ խոստովանեցաւ թէ, այն վրտաւորութիւնը որով այս այլանդակը յայտնեց կնոջն որ նա առողջ կը լինի, իմ մէջ չստիչ դուրս կասկածանք ծնեցուց և ես կ'ուզէի փախչիլ քովն: Բայց այն ժամանակ Կոխի խօսքը չկար դեռ և ծերունոյն կը մնար բռնել Չէրչլին այնպէս, ինչպէս խեղդուողը կը բռնէ ծղօտն: Բժշկուելի սկսելէ եօթն շաբաթ յետոյ տիկին Հոսսէտ այնքան լաւացաւ, որ ազատ կ'զբօսնէր ծառուղիներու մէջ, իսկ երկու տարիէն յետոյ, նա կը պարէր պարահանդէսներու մէջ, բոլորովին մոռանալով իւր թոքախտը: Այժմ անցած է 10 տարի և նա ունի այնպիսի մի առողջ կերպարանք, որ մեր հիւանդոցի հիւանդները կը դժուարանային հաւատալ այս պատմութեան:

Չէրչլի հրաշալի հնարքի պատմութեան չհաւատալուն շատ կը նպաստէին մէկ կողմէն Հոսսէտ ամուսիններու մի քանի տարօրինակ ու օրինակելի սովորութիւններն, իսկ միւս կողմէն դժուար էր հաւատալ, որ հիւանդութեան դէմ գտնուած այդպիսի հնարք մը այդքան երկար ժամանակ ծածուկ մնար բովանդակ աշխարհէն: Թէ՛ այս և թէ՛ ուրիշ պատճառով որքան Հոսսէտ ամուսինները կը խօսէին Չէրչլի և նորա գտած միջոցի մասին, այսու ամենայնիւ ոչ ոք չէր ուզեր անոնց հաւատալ: Եթէ ուրիշ տրամադրութեան տակ լինէի, գուցէ և ես նոյնպէս թերահաւատ լինէի անոնց նկատմամբ, բայց Աստուծոյ ողորմութեամբ ինձ այդպիսի բան չպատահեցաւ: Թէպէտ և Պ. Հոսսէտն այլ ևս կրճքացաւ չունէր և եկած էր ձմերկու ի Մենտոնա ոտնացաւ պատճառով, կամ, շատ կարելի է, անոր համար, որ անգլիացիք առհասարակ տունը չեն նստիր, բայց և այնպէս, նա երբեք չէր հեռանար Չէրչլի դեղերէն, որոցմէ միշտ պատրաստ ունէր. նա կարողացաւ խօսոյն և եթառաջարկել ինձ՝ փորձելու ներգործութիւնը, ինձ հետ պայման դրին որ ես չծխեմ, չխմեմ ոչ մի ոգեւելիք ըմպելիք, ուստեմ բաւական շատ և չառնեմ ոչ մի ուրիշ դեղ: Ես համաձայնեցայ և գործըն սկսած էր նոյն երեկոյեան:

Բոլոր բժշկութիւնը կը կայանայ այն բանի մէջ, որ ես պէտք է օրական երկու անգամ բերնիս մէջ սրսկէի սպայրոն՝ կոչուած դեղի որոշեալ չափը՝ առաւօտեան և երեկոյեան: Առաջին գիշերն ես չհամբերեցի և ընդունեցի փիօն, որով շարժեցի Տ. Հոսսէտի զայրոյթը. նա սպառնացաւ զրկել զիս սպայրոնէն, եթէ միւս անգամ եւս ես խոյս կուտամ մեր միջև եղած պայմաններէն: Ստիպուած էի հնազանդիլ:

Երկրորդ գիշերն առանց փիօնի տանջուեցայ: Երրորդ գիշերը քնացայ արդէն բաւական հանգիստ, իսկ չորրորդ գիշերը քնացայ մինչև լոյս առանց մինչև անգամ հազալու: Յետոյ հագս կամաց կամաց քնացաւ: Գիշերները շատ հանգիստ կ'անցնէի. ամբողջական քնացուեցաւ և մի ամսոյ մէջ կշիռս 13 ֆունտ աւելցաւ: Ես ուրախացայ և աշխոյժ ըստացայ այնպէս, որ իմ մէջ կատարուած փոփոխութիւններն ինկատ առնելով՝ մեր հիւանդոցի մէջ ընկերութիւն կազմեցին միանգամայն 250 ֆունտի սպայրոն բերել տալու:

Չը հասկցայ ի՞նչ պատահեցաւ անոնց, որոնք նոյնպէս սկսան սպայրոնով բժշկուել. բայց ինձ գալով, ես արդէն վաղուց կարող էի համարուել սպայրոնի բուժիչ ոյժը և եթէ մինչև օրս ես այդ բանը չըրի, անոր համար միայն, որ մի կողմէն զիս կաշկանդեց հիւանդաց նախապաշարով, այսինքն թէ չպարձեռնալ շուտով առողջանալուս համար և կրկին անգամ չհիւանդանալ, իսկ միւս կողմէն՝ ես կը վախնայի աշունչն որ ատեն հիւսիսային կլիմայի մէջ պիտի անցունէի և որ յայտնի է իւր առանձին խոնավութեամբ ու անխորժ աշնանային ամիսներով, Բայց և ահա՛ աշունն էլ անցաւ, եկաւ ցոլար և բըքաբեր ձմեռը, իսկ դէպի հարաւ երթալ չեմ փախադիր անցեալ տարւոյ նման: Վազելով վեր բարձրանալ սանդուղքներէն մինչև երրորդ յարկը՝ ինձ համար չնչին մի բան է: Ենչարգելութիւն ամենեւին չունիմ: Կոկորդիս վէրքերը առողջացան, և եթէ Կոխի լիմֆայի բէակցիքներն իմ ձայնական լարերը փճացուցած չլինէին, այն ժամանակ իմ ձայնն անգամ դժուար կը լինէր որոշել, որ ես մի ժամանակ թոքախտ եմ ունեցեր: Այն ժամանակէն իմ կշիռը 22 ֆունտ աւելցած է. ծանօթներս չեն ուզեր հաւատալ, որ ես սարսափելի հիւանդութիւն եմ քաշեր: Կարճ ըսելով, ես առողջ եմ, կարող եմ ճանապարհորդել, ման գալ և գործել: Սրսկելը կը շարունակեմ ու պիտի շարունակեմ մինչև երկու տարի, Տ. Հոսսէտի օրինակին հետեւելով: Միով բանիւ, ինձ պատահած փոփոխութիւնն այնքան ակնյայտ ու բարեբար է, որ ես այժմ իւր ժամանակն և կատարեալ բարոյական պարտքս կը համարիմ յայտարարելու որ առողջութիւնս կարող եմ վերագրել միմիայն հրաշագործ հեղուկի ոյժին, որ կը կոչուի բժիշկ Չէրչլի սպայրոն որ անձանօթ մնացած է Ռուսիոյ համար:

Ի՞նչ տարօրինակ բան է, որ Կոխի կատարելութեան չհասած գիւտն ամբողջ աշխարհը տակն ու վրայ ըրաւ,

իսկ Ձերչիլի վաղուց արդէն բազմա-
փորձ գործունէութեամբ յառաջադի-
մած միջոցը՝ քաղաքացիութեան իրա-
ւունք չստացաւ նոյն իսկ Անգլիոյ մէջ։
Այս երևոյթը բացատրելու խնդրի խո-
րը չթափանցելով, ես կատարելապէս
համոզուած եմ որ իւրաքանչիւր ան-
հատ՝ իմ օրինակին հետեւելով՝ երբ իւր
վրայ կը փորձէ սպայրոնի ներգործու-
թիւնը, կը հաւատայ՝ առանց ուշադ-
րութիւն դարձնելու զանազան դատա-
դրութիւններու և կշռադատումներու։
Պ. Հոսսէտ սպայրոնի թեթև յայտնու-
թիւնն այսպէս կը պարզաբանէ. բոլոր
Ձերչիլն ամբողջ իւր կեանքը նուիրեց
առհասարակ շնչառութեան գործարա-
նաց հիւանդութիւններուն և գլխաւո-
րապէս թոքախտի ուսումնասիրութեան։
Մօտ 30 տարի առաջ նա առաջարկեց
գործածել թոքախտի սկզբնական շրջ-
աններու մէջ՝ ֆոսֆորային աղերէ մի
տեսակ քաղաքութիւն, և յայտարա-
րեց ի գիտութիւն ընդհանուրի։ Ամէն
տեղ այս միջոցն ընդունուած էր, այ-
ժմ ևս կը գործադրեն զայն, բայց եւ
այնպէս բժշկականութիւնը չյայտնեց
իւր շնորհակալութիւնը և չկապեց Ձեր-
չիլի անունն իւր հնարած միջոցի հետ։
Ձեռն հասկնար թէ ո՞րքան ճշմարիտ է
այս քաղաքութիւնը, բայց Պ. Հոսսէտ
կը հաստատէր որ Ձերչիլն այսպիսով
վշտացած էր և այս իսկ պատճառով՝
իւր գտած սպայրոնի քաղաքութիւնը
չյայտնեց և իբրեւ գաղտնիք կը պահէ-
մինչև օրս։ Ձերչիլ Լոնտոնի մէջ բացաւ
հիւանդանոց ուր ընդունելով աղքատ-
ները, կը բժշկէ ճիւղաբար, վերջին ժա-
մանակներս սպայրոնի ի նպաստ կ'ըսուի
որ յԱնգլիոյ կազմուեր է մի ընկերու-
թիւն բաժնետոմսերով այս գիւտը մը-
շակելու համար։ Ընկերութիւնը չվախ-
ցաւ վարձատրել Ձերչիլն իւր գաղտ-
նիքին համար, որով և սպայրոնի պատ-
րաստութիւնը ընդարձակեցաւ։

Ինձ կը մնայ միայն զգուշացնել ըն-
թերցողն, որ սպայրոնի իւրաքանչիւր
սրուակը կը վաճառի տետրակի մէջ փա-
թաթուած, որ կը պարունակէ գործա-
ծութեան եղանակն ու ընկերութեան
յայտարարութիւնը։ Այդ տետրակը դե-
ղի հետ կը տրուի՝ իւր մէջ նկարագ-
րուած միջոցով դեղի զօրութեանը լի-
վին հաւատացնելու դիտաւորութեամբ։
Մէկ կողմէն նորա մէջ սպայրոնը կա-
ռավարիչի իրերէ համաշխարհային մի
միջոց, իսկ միւս կողմէն նա գրուած է
կարծես մի միայն Լոնտոնի բնակ-
չաց համար և մէջն ըսուած է, որ
սպայրոնով կարելի է բժշկուիլ մի միայն
բժիշկ Ձերչիլի հետազոտութենէն և
սեպհական խորհուրդներէն յետոյ։
Հարկ էր ունենալ մեծ քաջութիւն կամ

աւելի լաւ է ըսել, հարկ էր լինել մի-
անգամայն անեղանելի դրութեան մէջ,
ինձ նման, որ ուշադրութիւն չդարձը-
նէի այս բոլոր ըսուածներուն և դարձ-
եալ ապաւինէի սպայրոնին, բայց ես
կ'օրհնեմ ճակատագիրս, որ վճարեցի
փորձել իմ վրայ, ընդդէմ առողջ բա-
նականութեան բոլոր կշռադատու-
թեանց։

Սպայրոնի սրուակը կը վաճառի ի
Լոնտոն 4 շիլին 6 քէնս։ Մենտոնա բե-
րել տուինք մի ֆրանսիական դեղատան
միջոցով և վճարեցինք սրուակին 5 ֆր,
իսկ Բարիզի մէջ կ'առնէին 11 ֆր։ Մեզ
մօտ ի Ռուսիա սպայրոն չճախուիր, բե-
րել տալը կտրուեց։

Ձերչիլի ընկերութիւնը սպայրոնի
հետ կ'առաջարկէ նաեւ գնել յատուկ
պատրաստած բիւլվերիզաթէօր, ես
բերել տուի ինձ համար մէկ հատ 25
ֆրանքով, մինչդեռ մեզ մօտ ի Ռուսիա
կարելի է ձեռք բերել 2 րուբլիով ոչ
վատը։ Բիւլվերիզաթէօրի փոքրիկ շիլ
վրայ նշանակուած են 4 բաժանմունք,
որոցմէ 3ը կը լեցունին ջրով, իսկ չոր-
որդը սպայրոնով։ Սպայրոնը կը գործա-
ծուի 25% ջրի խառնուրդի հետ։ Ես չա-
փեցի յատկապէս պատրաստուած բիւլ-
վերիզաթէօրի բաժանմունքները և ե-
րեւաց, որ իւրաքանչիւրի մէջ կը մտնէ
մէկ թէյի դգալ հեղուկ, Հետեւաբար,
եթէ մեր աժանագին բիւլվերիզաթէօրի
մէջ ածենք 3 թէյի գգալ ջուր, աւել-
ցնենք նաեւ մի թէյի գգալ սպայրոն,
այն ժամանակ կ'ստանանք ճիշդ այն-
պիսի մի խառնուրդ և քանակութեամբ,
որպիսին Ձերչիլի բիւլվերիզաթէօրի մէջ
կը զետեղուի։ Իւրաքանչիւր անգամ
ընդունելու բաժին նշանակուած է 4
գգալ օրական՝ կէսն առաւօտեան, կէսն
երեկոյեան։ Բիւլվերիզաթիօնի ժամանակ
կ'աշխատին սպայրոնի փոշին որքան կա-
րելի է ներշնչել խոր, թոքերի մէջ և
շնչառութիւնը պահել, որպէս զի նորա
փոշին կարողանայ նստիլ թոքերուն վը-
րայ։ Բիւլվերիզաթիօնի ժամանակ բեր-
նին մէջ մնացած հեղուկը դուրս չեն
թքներ։ Ձերչիլը կը պահանջէ որ ան-
պատճառ կուլ տան, ես արդէն մեծ
քանակութեամբ կուլ տուած եմ այդ
հեղուկէն և ոչ մի վնասակար ազդե-
ցութիւն չէ ըրած ստամոքիս վրայ։
Ընդհակառակն իմ մարսողութիւնը կա-
տարելապէս լաւ է։ Ես այժմ կ'ուտեմ
այնքան շատ, որքան չէի ուտեր երբ
և իցէ։

Ն. ԱՀԱՐ.

(ՆՈՐ-ԴԱՐ)

ԿԱՊԱՂՈՎԿԻՈՅ ԳԱԽԱՌԻՆ

ՀԻՆ ԼԵՋՈՒՆ ԵՒ ՆՈՐԱ ԱՐԻՒ ՅՈՒՆԱՐԻՆ
ԳԱԽԱՌԱՐԱՐԲԱՌԸ

(Շար. Տես քիւ 21)

Կապաղովկիոյ մէջ Վարդավառի տօ-
նի կատարման մասին Պ. Բառօլիտի
տուած տեղեկութիւնը որքան զարմա-
նալի ու հետաքրքրաշարժ, նոյնքան ևս
տարօրինակ երևեցան գուցէ շատերու։
Արդարեւ կրօնագիտութեան ու եկեղե-
ցական պատմութեան խորին հմուտ-
թիւն մը պէտք չէ՝ ցուցնելու համար
թէ Համբարձման ու Հոգեգալստեան
տօներէ բաւական վերջը կուգայ Վար-
դավառը, թէ Վիճակը Համբարձման
օրը կ'ընեն։ Բայց արի՛ տես ի՞նչ կ'ընէ
մեր հայագէտ Տաւկալօսն։ — Զատիկէն
յետոյ վեցերորդ, իսկ Զատիկէն հաշուե-
լով եօթներորդ կիւրակէն որ է երկ-
րորդ Մաղկազարդէն չորս օր առաջ,
այսինքն Համբարձման նախընթաց օրը
կ'սկսի Վարդավառի տօնը Կապաղով-
կիոյ գաւառին մէջ։ Մի՞ գուցէ Պ. Բա-
ռօլիտի տուած տեղեկութիւնը սխալ
ու թիւր լինին և կամ թէ կեսարացիք
տարբեր տօնացոյցերով ու օրացոյցե-
րով վարուին։

— Ոչ, շատ ճիշդ են «Կապաղով-
կիական» ի յարգոյ հեղինակին ծանօ-
թութիւններն, և կեսարացի մեր ազ-
գայինք ալ մեզ նման կը վարուին այն
օրացոյցներով զորս կրօնական ժողովոյ
կողմէ կարգեալ մասնագէտ յանձնա-
խումբ մը յետ մանրագնի՜ն քննութեան
կը վաւերացնէ ու կը թոյլատրէ տպա-
գրել վեց ամիս առաջ ամէն տարի։
Կը հաւատա՞ք եթէ ըսուի թէ կեսարա-
ցիք երկու Վարդավառ ունին, բուն
Վարդավառէն (Այլակերպութեան տօն)
զատ ունին նաեւ Վարդավառ մ'ալ որ
Հոգեգալստէն շարժաթ մը առաջ կու-
գայ ճիշդ Համբարձման օրը, և կամ թէ
աւելի պարզ ըսելով, կեսարացիք Համ-
բարձման տօնը Վարդավառ կ'անուա-
նեն ու կը տօնեն, տօնելով միանգա-
մայն բուն Վարդավառը յուլիս և
օգոստոս ամսոց մէջ, զոր կը կոչեն
Սուրբ Կարապետի տօն, զի այդ օրը
կեսարիոյ մօտակայ բազմադարեան
Սուրբ Կարապետի վանուց յատուկ
օրն է, հոն կ'երթան, կը հաւաքուին։
Պատմութենէն գիտեմք թէ Վարդա-
վառ մեր նախահայր հեթանոսա-
կան ժամանակի նշանաւոր տօներէն
մին էր որ աշխարհախումբ կը տօնուէր
Նաւասարդի, այսինքն ամանորի առա-
ջին օրը։ Սուրբ Լուսաւորիչ որ քրիս-
տոնէական սրբազան հրովն խառնավառ
քուրմերը քահանայ կը ձեռնադրէր,
մեհաններն ու բազինները տաճարնե-

րու կը փոխէր, կապալառական սովորութիւնները կը ջանար արմատախիլ ընել, չիրնալով վարդափառի աւագ տօնը ջնջել բոլորովին, վերածեց զայն Քրիստոսի Պայծառակերպութեան տօնին: Վարդափառի օրը վարդով կը պսակուէին շինականն ու աղնուականն, մեծն ու փոքրն, վարդով ու զանազան նաշխուն ծաղիկներով կը զարդարէին աստուածոց բազմիկներն, մասնաւորապէս Վահկանեան գիցն անդ ի Տարոն: Բայց Հայաստանեայց եկեղեցին խաղողի օրհնութեան հանդէսը կատարելով Աստուածածնայ վերափոխման տօնին, չեմք կարծեր որ ճիշդ լինի Պ. Քառօլիտի սա զխաղողութիւնը թէ խաղողի տօնն էր Վարդափառի տօնը: Աթլնքի համալսարանին յարգոյ ուսուցիչն սխալած է կարծելով թէ Հայք Յունաց նման խաղողը Վարդափառին (Ալլակերպութեան տօն) կ'օրհնեն: խաղողը միշտ Աստուածածնին կ'օրհնեն Հայք և չեմք կրնար ընդունիլ թէ Կեսարացիք բացառութիւն կը կազմեն՝ խաղող օրհնէքն կատարելով Վարդափառին:

Իսկ գալով վիճակին, քրիստոնէական հին սովորութիւններէն մին է որոյ գաղափարն Մատթեոսի վիճակաւ ընտրութենէն է առնուած անշուշտ:

46) «Վեգաս» վեգի խաղ, նոյն ինքն վեգն ալ. բառ Փարսո. Հայերէն լեզուի մէջ վեգ բառը կը նշանակէ լիցք (աւրգ), յետոյ վեգ, կուր: Ակներե է թէ Փարսոսական այս բառն անմիջական խնամութիւն ունի հայկականին հետ: Սակայն ի՞նչպէս այդ բառը Հայերէնի մէջ վեգի, կուրոյ նշանակութիւնը աւեր է: Ասոր համար պէտք է որոշուի սոյն բառերուն արմատներու ստուգաբանութիւնը և հաստատուի այդու ճշգրտապէս թէ Կապալառութեան բառը Հայերէնէ չէ մտած: Ֆարսացեաց լեզուին մէջ վեգաս կը նշանակէ գլխաւորաբար վեգի խաղը. կերեւի թէ սոյն նախական նշանակութեամբ վեգաս կոչուեցաւ նաև լիցքն, վեգն, ինչպէս որ ֆոդդոս (ֆիլիսոս քսո Յունաձուգմոց) ֆոդդիկնէն յառաջ եկած է նոր յունարէն ֆոդին որ կը նշանակէ վեգի խաղն և միանգամայն վեգն: Կերեւի ուրեմն որ ի հնուն վեգաս բառը կը նշանակէր խաղ. բաղդ, վիճակ. սոյն նախական նշանակութիւնը և բառին արմատը հարկ է մնաւել յունարէն իֆին, իֆի, լատ. vices, vicissim ին մէջ որոց գլխաւոր իմաստն է փոփոխումն, կերպարանափոխումն և բաղդ: Սակայն սոյն յունալատին բառերու առաջին և սկզբնական նշանակութիւնը չարժման գաղափարն էր և անհաւանական չէ թերեւս ենթադրել թէ իֆինու՝ իֆիսու՝, իֆիսու՝ և ֆո համարման իֆինն և vicesին հետ

թերեւս vinore=յաղթող, Փոփոխման փոխադարձութեան (vicissim) իմաստն յառաջ եկաւ կապալառութեան մէջ խաղի նշանակութիւնն և այդու խաղի գործիքին իմաստը, իսկ հայերէնի մէջ վեգի գաղափարը և առաջին տեսքով բոլորովին դժուարամեկնելի իմաստն վեգի, կուրոյ: Հաւանականաբար ասկից ծագած է Հայերէն մի այլ բառ, ոգի, եթէ աղաւաղումն չէ յունարէն ֆիվոսին, խորանարդ, քուեայ (գար), վասնզի չեմ կրնար ընդունիլ թէ այս ոգի բառը նոյնը լինի ոգի=հոգի, շունչի հետ: Բոլոր այս խաղարկութիւններէն կը հետեւի թէ Ֆարսացեաց վեգաս բառը և Հայերէն վեգ բազմաթիւ արիական լեզուաց մէջ միևնոյն հասարակաց արմատն ունին: (Բաղդատէ նաև հին գերմ. wehsal, նոր գերմ. wechsel=փոփոխում): Բնաւ ո և է փաստ մը չկայ սոյն բառին հայերէնէ ի Կապալառութեան մտած լինելու ենթադրութիւնը հաստատելու համար:

Պ. Քառօլիտի, ինչպէս գրեթէ բոլոր բառերն, նոյնպէս և վեգասն յունարէնով մեկնելու նուրբ հրոյժն ու աւինով մը բորբոքած, իւր աճապարանքին մէջ գրեթէ մոռնալով բուն խնդրոյ նիւթը, կ'ենէ բացատրելու թէ վեգն ի՞նչպէս վեգի նշանակութիւնն առած է Հայերէն լեզուի մէջ, թէ վեգը նախապէս խաղին ըսուելով ի՞նչպէս գործիքն ալ նշանակեց. բայց դժբաղդաբար մեր հայագէտ բրոֆէսորն ո՛չ մին և ո՛չ միւսն կարող եղած է բացատրել: Վեգն արդարեւ մեր լեզուին մէջ վեգի մօտաւոր իմաստն ալ ունի, զոր օրինակ ի վեգ գալ՝ մրցիլ, վիճիլ, ևն. բայց իրօք իֆին vices, vicissim էն կուգայ, ասի նուրբ կէտ մ'է զոր կարելի չէ գրչի հարուածով մը որոշել: Հոս փոքրիկ դիտողութիւն մը աւելորդ չէ կարծեմք. վեգն ու վեգն նշանակութեամբ գրեթէ նոյնն են: Միայն ուղղագրութեամբ կը տարբերին. միոյն մէջ գն ճի փոխուած է միւսոյն մէջ: Արդ, եթէ նկատեմք որ կարգ մը բառերու մէջ «գ»ն և «ն» լրծորդի դեր կը կատարեն, խնդիրը կը պարզուի այն ժամանակ: Ահաւսիկ քանի մը օրինակներ. ուղղ=ուղիկ, Գարրիէլ=ձեպրայիլ, Գեհուէն=ձիհուէն (գետի Փոքր Ասիա), ձենովա=Գենովա: Իսկ թրքերէնի «ն» յաճախ լծորդ է «գ» լի, ինչպէս հաճի=հակի, խալաֆա (խոնա)=խալաֆա. պարսկերէն նէվ-նեք=կելվեք, հայերէն գոհար, եթէ առարկուի թէ օտար լեզուի բառերն են սոքա՝ իրենց յատուկ տառադարձական օրինոքն վարեալ և կամ հայացած իրենց ազգային լեզուական այս կամ այն ձևէն առնուած, նոյնը չեմք կըրնար ըսել վեգին ու վեգին, ուղին ու

ուղիկին նկատմամբ որք հայերէն են և մեր նախնի մատենագիրներէն գործածուած: Այսու հանդերձ. ինչպէս ըսինք, պարզ դիտողութիւն մ'է մերն. հմտագունից կը մնայ զօրեղ փաստերով ցուցնել թէ «գ» ու «ն» լծորդ են կամ ոչ: Իսկ գալով ոգիի. հոգի, շունչ, դեւ, կեանք, հով նշանակութիւններէն զատ ուրիշ իմաստ մը չունի ըստ մեզ. և չեմք կրնար հասկնալ թէ ոգին էն զատ ուրիշ ոգի մ'ալ կայ՝ յունարէն ֆիվոս խորանարդ, քուեայ (գար)էն ծագած ըսելով՝ այդ միւս ոգին ի՞նչ նշանակութիւն ունի ըստ Պ. Քառօլիտի: Նոյնպէս ըստ մեզ բոլորովին աւելորդ է ու գուցէ սխալ երկարօրէն բացատրել թէ վեգն, նախ խաղ նշանակելով, ի՞նչպէս վերջը գործիքն ալ իմաստն առաւ. սակաւաթիւ չեն բառեր որք միանգամայն խաղ մը ու անոր գործին նշանակեն:

(Շարունակելի)

Ն Ա Ր Հ Ի Մ

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Ա.

ՁԵՆՆԵՊՈՂՈՍ

Մինչդեռ Հայ աշխարհիկ մատենագրութեան ճիւղերն հետզհետէ կ'ընդարձակուին և կատարելագործուելու ջանքեր կը լինին, ազգային կենսագրական կարեւոր ճիւղն ոչ այնչափ հետաքննելի նիւթ մը նկատուած է ի Տաճկահայս: Քանի՞ ազգ. կենսագրութիւնն ունիմք այսօր՝ լրիւ և առանձինն հրատարակուած:

Ձմիւռնից Մեսրոպեան վարժարանի նախկին վերատեսուչ՝ Ռուբէն Անդրէաս Թ. Փափաղեան բազմաթիւ վարժապետին, և անզուգական բարերար Պէլճեան Յարութիւն ամիրայի կենսագրութիւնները կան, զորս գրած և առանձինն հրատարակած է յոյժ ողբացեալ Ստեփան Էֆ. Փափաղեան:

Նոյնպէս, առաջնակարգ մատենագիր Մեսրոպ Ռադիզեանցի կենսագրութիւնը կայ գրուած և իւրյա ընծա յուած ի Տ. Յովհաննէս Աւագ քահանայէ Մկրեան:

Թո՛ղ պարբերական հանդէսներու և լրագրութեան մէջ խիստ ցանցաւ տեսնուած օրուան դէմքերու քանի մը ուրուագրութիւններն ու ծրագրուածները, գրուած ու հրատարակուած կան քանի մը տասնեակ ժամանակակից դէմքեր, յօրինեալ Մ. Մամուրեանէ՝ Հայկական Նախականի մէջ, ի Թ. Պարոնեանէ՝ Կապրակ Ազգային-Ջոզբու մէջ, ի Տօքթ. Մ. Իւթիւճեանէ՝ պարբերական մանրատարերու մէջ:

Ասոնցմէ զատ՝ ոչինչ:

Սակայն ի ռուսահայս՝ այսպէս չէ՝:

Անդ ազգային կենսագրական մասն՝ կրթական կամ դասական յատուկ ճիւղ համարուած և դամ քան զգամ մշակուելու և տարածուելու վրայ է:

Ազարէկեան Մարկոս էֆէնտիի հրատարակած Կոնստանդնուպոլիսի մէջ իշխան-Բագրատունիի տողած Սի Բանի խօսքը՝ Արքայական Խաչատուրի մասին, ցարդ ոչ նուազ տպաւորութիւն թողած է ընթերցողաց վրայ: Օտարառահման կենսագրութեանց մէջ յիշատակութեան արժանի են Նոր Զուգայու Առաջնորդ՝ Բէգնազարեան Թագոս Արքեպիսկոպոսին կենսագրութիւնը, աշխատասիրեալ ի Պ. Յարութիւնէ Թ. Տէր Յովհաննէանց Նոր-Զուգայեցւոյ, 1863ին, և Ներսէս Ե. Աշտարակեցի Հայրապետին կենսագրութիւնը՝ հեղինակեալ ի Պատկանեանց Գարբիէլ Աւագ-Քահանայէ:

Ոչ նուազ հետաքրքրական են ի Ռուս-դով Պ. Յ. Տէր-Արաքսամեանին վիմատիւ պատկերներով հրատարակած Յովսէփ Դ. Երկայնալողուկ Արղւութեանցին, Այվազովսքի Գարբիէլ Արքեպիսկոպոսին, Ստեփաննոս Նազարեանցի, Միքայէլ Նալպանդեանցի, Մագիստրոս Մսերեանի համառօտ կենսագրութիւններն, որոց առաջինն՝ յատուկ մատենակաւ, և միւսներն՝ իւր սեպհական տըպարանէն ելած գեղատիպ օրացոյցներուն մէջ:

Մոսկուայի պատկերազարդ Փարոսին և Պ. Սիմէոն Գուլամիրեանցի հրատարակած Արաքս պատկերազարդ հանդիսին մէջ՝ ծանօթ անձնաւորութեանց կենսագրութիւններ տեսնուեցան, ինչպէս Աղբիւր-Տարագ մանկական հանդիսի խմբագրութեան կողմանէ ի լոյս ընծայուած առանձին յաւելուածոց մէջ յերեւան եկած են յաւերժայիշատակ Պետրոս Շանչեանցի, վիպագիր Մերենցի, և այլ մի քանի ազգայնոց պատկերներն ու կենսագրութիւններն:

Յիշատակելի են աստ՝ Մուրնի մէջ Պ. Բարամեանի գրած Պերճ Պաօշեանցի, Գէորգ Զմիկեանի և Թատերագիր Սունդուկեանի հակիրճ նկարագրներն, ինչպէս նաև Փոքր գրական հանդիսին և Արձագանգ ի մէջ այլ և այլ կարեւոր ազգայնոց կենսագրականները:

Սոյն փորձն ըրած է Պ. Տիւրեան Վիլենացւոց Հանդէս Ամսօրեային մէջ, կենսագրելով Յ. Մելիք-Յակոբեանը, Ռաիսայէլ Պատկանեանը, Էքզեանը և այլ ծանօթ դէմքեր. նոյն հանդիսին մէջ տեսնուած են Տիւղեանց գերդաստանի նահապետաց և այլոց կենսագրութիւններն ու պատկերները:

Կենսագրութիւնը՝ երբ միակողմանի չգրուին և աննախապաշարեալ չը

պատրաստուին, ոչ միայն օգտակար կը լինին չափահաս ընթերցողաց համար, այլ և հրահանգիչ ու օգտակար դաս մը կը լինին նորածին մանկութեան: Մարդկային յուշարձաններուն և կատարուած Յորէլեաններուն շնորհալ յիշատակն ու փայլուն ցոյցներն այնչափ խոր և կրթիչ ազդեցութիւն չեն գործեր, որչափ կենդանի ոճով գրուած կեանքի պատկերներ, ճշգրտապատում նկարագրներ՝ որ մարդկութեան սրտերուն վերայ կը ձգեն իրենց դիւթիչ զմայլումն և անջնջ դրոշմն:

Իցի՛ւ թէ մեր կենսագրներն ալ զայս էական կէտն նկատողութեան առնելով, տրամադրուէին կենսագրելին և տասաներորդ դարու ծանուցեալ ազգային դէմքերն, ինչպէս են, Փէշտումաճեան Գրիգոր մեծանուն պատուելին, Եաղուպ և Նորհրէ Ամիրայքը, Տ. Օհան քահանայ Վանանդեցի, Գէորգ-Դպիր, Յարութիւն վարդապետ Ալամբարեանց, Բժշկապետ Հալովերտեան, Շուշեցի Հախումեան, Քանաքեռցի Աղասին, մանկավարժ Բահաթրեան, Աղաթօն Գրիգոր, Օտեան, Ռուսինեան, Պրոսպայի Անտօն-Զէլէպին, Զմիւռնացի Ապրօ-Զէլէպին, Մանուկ պէյը, Մուսնիս խաչատուր վարժապետը(1), Օհան Զորպաճին, Մելքոն Զորպաճին, Եղեսեան, Հրաչագործը, Յովհաննէս Եզեկեանը(2), Նիկողայոս Մ. Զօրայեան(3),

(1) Փէշտումաճեան Գրիգոր պատուելին աշակերտած է ևս Մուսնիս անունեալ խաչատուր վարժապետին, որ դաս կ'ուտայ եղբոր ի Սամաթիա Աղա-Համամ թաղը՝ պանդոկի մը սենեկին մէջ, ուր աշակերտակցած են Անդրիանուպօլսեցի Պօղոս Պատրիարք, մեծահամբաւ քարոզագիր Կարապետ Պատրիարք, կրօնագէտ Թագաւոր վարժապետ, Հիւստովերտին, Շիքման Անդրանիկ վարժապետ, ևն:

(2) Յովհաննէս Եզեկեան՝ ընդ Ռեքրիացի է, աշակերտած՝ Հայր Եղիա Թովմաճանեանի, ընկերակցութեամբ Հայր Արսէն Բագրատունեոյ: Ուղեւորած է յԵւրոպա, գնացած է ի Վենետիկ: Գիտէր Իտալերէն, Լատիներէն, Գաղղիերէն, Արաբերէն և քաջ Հայերէն: Բազմաթիւ տապանագրեր ունի Իսկիւտարու գերեզմանատան մէջ. հեղինակած է նաև Պրոսպայու և Արմաշու բոլոր արձանագրիւնները՝ Հայկաբանութեան ամէն կողմով և իտալական ներշնչութեամբ: Իտալերէնէ թարգմանած է Ապաստանաբան սիրոյ գիրքը, տպագրեալ ի Զմիւռնի Տէտէեան տպարանին մէջ: Դեռ ի Վենետիկ՝ չէին արտադրած Տաղերգութիւններ և այլ երկասիրութիւններ, ի Պօլիս՝ անշուշտ հիւղակներու մէջ ապրելով, իրենց բնական կորովով, հանձարով և լեզուագիտութեամբ կը փայլին՝ Յովհաննէս Եզեկեան և Գէորգ պատուելի Տ. Յովհաննէսեան, հեղինակն պարսկահայ բառարանին:

(3) Փէշտումաճեանի սոյն աշակերտն

Եասախան-Մարգար, Պապիկ-Այվազը, Վարդան-Փաշան, Յակոբ Զալեան, Պետրոս Դափանցի, Միքայէլ Սալանթեան, Յակոբ Շահան-Զրպետ, Ճէղայիրեան Սարգիս Ամիրայ, Սաքայեան և Ումէտիկ: Ինչքանա, Դուրեան, Տոքթօրք Բեաթիպեան, Մէլուրեան և Արծրունի, Սրբուհի Մայրապետ, Ֆիլիպա Պօղոս, Տէրպեցի, Սարթալի Տ. Նշանը, Արմենակ-Հայկունին, Կատակարան Ռշտունին, Շահնազարեան Կարապետ վարդապետը, Գրաւմառ Մարգարը, Մինէճի-Անդրանիկ, տպագրիչ Ռուբէն Բիւրքճեան, Յովսէփ Մուրատեանց, Սըվաճեան Յարութիւն, Պօղոս պէյ Եոսուֆեան, Պալեան հարազատք՝ Նիկողոս եւ Յակոբ պէյ, Գարեգին Զափրասեան, Միաջէն Գէորգ պատուելին, երաժշտապետ Գաբրիէլ Երանեան, Թաճեան Նիկողոս, Թօփուղեան Յակոբ եպիսկոպոս Լմայ, Երեմիա եպիսկոպոս Տէր-Սարգսեանց, Բաստամեան Վահան վարդապետ, Փիրզալէմեան Ղեւոնդ վարդապետ, Վարժապետեան Ներսէս, Եմէմէիճեան Յակոբ, Դժոխք Յարութիւն, Հայր Սիպիլեան, Հայր Տէվրիշեան, Բերովէ Պատկանեան, Մկրտիչ Էմինեան, Մկրտիչ Սանասարեան, Փափազեան Ստեփան, Ղազարոսեան Բրիտոստոս, Պատկերահան Տեւեմաք, լուսսարապետ Եփրեմ և այլ ծանօթ ազգայինք իրենց արեւանկարներով գրէին ու հրատարակին նաև Ներսէս Շնորհալոյ, Ս. Սահակայ, Ս. Մեսրոպայ, Խորենացւոյ, Փարպեցւոյ, Նարեկացւոյ, Տաուշեցւոյ, Սարկաւազ-Վարդապետին, Լամբրոնացւոյ, Որոտնեցւոյ, Յովհան Մանգակունի, Մովսէս Խորենացի, Եղիշէ, Ղազար Փարպեցի, Անանիա Շիրակացի, Անանիա Սանահնեցի, Անանիա Նարեկացի, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Մագիստրոս, Յովհաննէս սարկաւազ, կամ սարկաւազ-վարդապետ, Միսիթար Հերացի, Միսիթար-Գօշ, Յովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, և այլ նախնի գրողաց և Հարց կենսագրութիւններն, ծանօթացնելով ժողովրդեան սոյն նուիրական անձնաւորութեանց կեանքն, նկարագրին և երկասիրութիւններն, միշտ օգտուելով

աշխատասիրած և 1852էն սկսեալ հրատարակած իսկ է հետեւեալները.

1. — «Ընթերցասիրութիւն»,
 2. — «Վարժութիւն ընթերցանութեան»,
 3. — «Նկարագիր ազգային դաստիարակութեան»,
 4. — «Տնտեսական տեղեկութիւնք»,
 5. — «Նամականի ընտանեկան»,
 6. — «Վարք Յիսուսի»,
 7. — «Ռուպէնսօն Գերմանացի»,
- Բաց յորոց, Մասիս լրագրոյն երբեմն թերթօնագիրն ևս եղած է մեծ յաջողակութեամբ:

Մուրատեանց Ամեն. Մեղիսեդեկ Սըր-
բաղանի երկասիրած Եկեղեցական Պատ-
մութեան եղական հեղինակութենէն:
Կենսագրութիւնք՝ եթէ սահուն ու-
ճով, յարակից մանրամասնութեամբ, հե-
տաքրքրաշարժ ծանօթութիւններով,
ճշգրիտ պատկերով, գեղեցիկ տպագ-
րութեամբ, լաւ թղթով, աժան գնով
պատրաստուած լինին, յափաիւրով
կ'ընթեւնու ժողովուրդն, և կ'օգտուի
յանհունս:

Տարաբաղդարար, ի մեզ կարևոր և
ժողովրդական ճանչցուած ազգայնոց
կենանքն, անցելոյն մէջ՝ մեծ մասամբ
անյայտութեան մատնուած են, և այս
մասին ինչ որ գիտեմք, աւանդական է:
Իսկ ներկայիս մէջ ծանօթ ազգայնոց
կենաց մասին՝ ընդհանուր անտարբե-
րութիւն կը տեսնուի:

Աւանդական եղած անձնաւորու-
թեանց մէջ առաջնակարգ յիշատակու-
թիւնը կուտամք դարուս սկիզբն երե-
ցող Ձեցեկ անուանեալ Պօղոս սարկա-
ւազին, որ գրեթէ անյայտութեան
մատնուած դէմքերէն մին դարձած է
այսօր:

Ինչպէս որ Ձմրւոնացի Մսուր դը-
պիրը՝ (ապա Մագիստրոս Մսերեանց),
1828ին Աշտարակեցի Ներսէս Արքեպիս-
կոպոսէն ուրար առած է յէջմիածին(1),
և բարձրագոյն ուրարակիր նկատուած
է նոյն ժամանակին՝ արժանեացը հա-
մար, նոյնպէս, Ձեննէ-Պօղոս պատուելի
ալ ուրարակիր կամ սարկաւազ եղած
է՝ կոչմամբ Աթոռակալ պատրիարքին,
գնահատելի արժանեացը պատճառաւ:

Ներսէս Վարժապետեանի պսակն է
Ձեննէ-Պօղոս, որոյ նկատմամբ ծանօ-
թութիւն չլրացաւ քաղել նոյն իսկ մե-
ծանուն թոռն, հակառակ իւր բոլոր
մեծ հեղինակութեանը և առձեռն ու-
նեցած դիւրութեանցը. և սակայն մեք՝
մեր բնական հարցասիրութեամբը և հե-
տաքննութեամբը քաղած եմք. քիչ մը
բան, և ահա հրատարակութեան տա-
լով, կը փափաքիմ որ՝ ուրիշ բանասէր
մը օր մը կարենայ ամբողջացնել զայն:

Ձեննէ Պօղոս պատուելի՝ որ գեղա-
ձայն երգասաց է եղեր, բնիկ Սառգիւղ-
ցի է, և Բերկաւ ձեռն Վսեմ. Պետրոս
էֆէնտի(2) հաւն՝ առ ի մօրէ, ինչպէս

(1) Չմոռնանք յիշատակելու թէ ծա-
նօթ ազգային հրատարակագիրներէն՝
Սաչատուր Աբովեանց, Մեսրոպ թա-
ղիպետեանց, Միքայէլ Նալպանտեանց ևս
ուրարակիրներ եղած են յէջմիածին:

(2) Բերկաւ ձեռն Պետրոս էֆէնտի
ուսեալ և քաջ լեզուագէտ արժանեաց
տէր անձ մ'է, որ կը պաշտօնավարէ
Ելեմուական նախարարութեան մէջ
Քարտուղար-թարգմանի փափուկ պաշ-
տօնով: Նախկին Եպարքոս Բարձ. Սա-
յիտ փաշան գնահատուելով Ն. Վսեմու-

նաև հոգեւոյն Ներսէս Պատրիարքի հաւն,
որպէս ի վերև ակնարկեցինք, յորմէ
ծագում առած է Վարժապետեան մա-
կանունն:

Ձեննէ-Պօղոս՝ հայերէնի մէջ ունե-
ցած հմտութենէն զատ, սովորած է նաև
յունարէն լեզուն, և բժշկութեան տա-
րերաց վերաբերեալ նախնական գիտել-
եաց հետազոտութեամբը լատիներէնն
ալ մշակած է:

Այս պատուական անձ՝ Ձինճիրի-
խանի վերի յարկը ունեցած սենեկին
մէջ դասարան մը բանալով, յաշակեր-
տութիւն ընդունած է և Ամիրայազատ
ուսանողներ, զոր օրինակ՝ Ճանիկ-Ամի-
րայն, Բարունակ-Ամիրայն, Աղա-Պօղոս
Ամիրայն, և ուրիշներ:

Ըստ աւանդութեան, սա՝ կիրակա-
մլտի Լոյս-գուարք երգի եղանակը Յու-
նականին վրայ բարեփոխելով, արդի ե-
ղանակը վերակազմած ու ձայնախօ-
սած է:

Կ'ըսուի թէ՝ Հոփիսիմեանց դի. շա-
րականին (Անճինք նուիրեալք) եղանա-
կըն, ինչպէս և վերջ ձայնի—Նոյնանման
դարձուածքներն կամ, եթէ ներելի է
հաւատալ, Յունականի մօտ եղանակ-
ներն՝ Ձեննէ-Պօղոս պատուելիի ձե-
ռամբ վերածնունդ տեսնուած մեր սրտառուչ
երգարանութեանց մէջ, զի ո'չ ո' և է
Եւրոպական և ո'չ իսկ Թրքական եղա-
նակներ քաջայայտ և դիւրուսանելի էին
այն ժամանակի մերազնեայ երգահա-
նաց:

Սա՝ ինքն եղած է որ իւր նախոր-
դաց և ժամանակաց մէջ առաջինը լի-
նելով՝ Յունաց եկեղեցական երգեց-
մանց և խազերուն հմտացած է լիովին:
Այլ զժառանգարար, իւր զանազան ձեռ-
ագիրներն ցիր և ցան եղած են:

Ձեննէ-Պօղոս՝ լաւ գեղագիր, ու
մանաւանդ զարդագիր ու նօտագիր
եղած է:

Կը յիշուին մի քանի նկարագրա-
գրերն, որոյ մի բնագիր օրինակը տես-
նուած է Ձեննէ-Պօղոսի թոռներէն մի-
ոյն քով: Ձեցեկ մականունն առթիւ,
կը յիշեմ թէ՝ հոգեւոյն Ներսէս Սըրա-
զան շատ հետազոտութիւններ կատա-
րեց, հաւատուելու համար թէ՝ այդ
մականունն իտալական ծանօթ Ծաննի
մականունեալ գերդաստաններուն հետ
յարաբերութիւն ունի, թէ ոչ:

Չգիտեմք թէ՝ ո՞ւր յանգեցան Նո-
րին Սրբազնութեան հետազոտութեանց
և խուզարկութեանց եզրակացու-
թիւնքն: Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

Թեան արժանիքն՝ կայսերական Ամլտէ
դիւանէն ի պալատ ուղղեալ գեղու-
ցագրին մէջ մականորոյն է: «Բէք լայըք
վէ սէզավար տըրո»:

ՄԱՅԻՍԻՆ ՎԱՐՊԷ

Առ Յ.

Երբ ամիսներու քաղաքային
Մայիս մէկի առաւօտուն
Կանուխէն դու ինձի ցուցիր
Այն վարդը համես լայնածիր,
Որ արեգին հետ էր զարբեր
Ու Մայիսին հետ էր փքրեր
Մէջը կունց կունց քերքերն հաւքեր,
Շուրջը լայներն էր համակեր.
Ծայրերը բոսորագեղ էին,
'Ի արմատները ճերմակ էին.
Բոսորագունէն մինչ ճերմակ
Եղած ամէն գունոց տեսակ՝
Իրեն տեղն ունէր այդ մանրիկ
Մանրիկ քերքոց վրայ պզտիկ:
Երբ դուն ինձի ցոյց տուիր զայն,
Գիտե՞ս թէ ով յիշեցի:

—ԱՅՆ:

Վ. Գ.

ԿՈՎԿԱՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, ապրիլի 12-ին, Թիֆլիսի
քաղաքային խորհրդի դահլիճում տեղի
ունեցաւ Թիֆլիսի քաղաքային վարկի
ընկերութեան հաւատարմատարներին
ընդհանուր ժողովը Պ. Ղորղանեանի
նախագահութեամբ: Ժողովը հաստա-
տեց ընկերութեան վարչութեան 1891
թուի դրամական չընթացութեան հա-
շիւը և 1892 թուի ծախքերի նախահա-
շիւը, որից յետոյ ընկերութեան գոր-
ծունէութեան 10-ամեակը լրանալու
առթիւ որոշուեց վարչութեան մէջ ծա-
ռայողների համար իւրեւ վարձատրու-
թիւն 3,000 ռուբլի յատկացնել, իսկ
նախագահ իշխան Ն. Ամատունուն ըն-
կերութեան դատական գործերը ձրի
վարելուն համար՝ 6000 ռուբլի: Ի վեր-
ջոյ ընտրութիւններ եղան. վարչու-
թեան տեսուչ ընտրուեց Մ. Գ. Ռո-
տինեան, վերահսկիչ մասնաժողովի ան-
դամ ընտրուեցին՝ Ի. Ա. Չիթախեան,
Լ. Շ. Մէլիք-Բէգլարեան և Պ. Ա.
Գուրգէն-Բէգով, գանձապահ ընտրուեց
Ն. Տիգրանեանց, վերաստուգիչ մաս-
նաժողովի անդամ ընտրուեցին Ս. Մ.
Ենիկոլովեան, Ի. Գ. Դիգբուլիճէ և
Ի. Խ. Արվանեան, իսկ վարչութեան
տեսչի կանգնատ ընտրուեց Վ. Գ.
Շանչիեան:

— Վաղարշապատից. — Էջմիածնում
պատրաստութիւն են սկսում մի նոր չի-
նութեան միաբանների բնակութեան
համար: Փող թէպէտեւ չկայ, բայց ու-
րուագիծը շատ փառաւոր է, որ ար-
խիդէկտոր Շտերնն արդէն կազմել է:
Իւրաքանչիւր միաբան պէտք է ունե-
նայ երկու սենեակ, մի սալոն, խոհա-

նոց, լողարան, տուչ և ժամանակի պահանջների համեմատ յարմարութիւններ, կոմֆորտ:

Մտադրութիւն կայ, ասում են, ձեմարանին յատկացրած գումարը գործ դնելու շինութեան վրայ և ապա ժողովարարութիւն անելու:

— Արտասահմանի հայ թերթերը հաղորդում են, որ Ամերիկայի գաղթական հայերը, որոնց թիւն հետզհետէ աւելանում է, մեծ մասամբ խիստ ցուլի դրութեան մէջ են. նրանք օրն ի բուն չարչարում են ծանր աշխատանքի տակ, բայց վարձատրութիւնն այնքան քիչ է, որ հազիւ են կարողանում իրենց գոյութիւնը պահպանել:

— Զալալ-օղլուց. — Անցեալ ամիսներն այստեղ մի այրի կին վախճանուեց, որ չնայելով իւր չքաւորութեանը, ձեռքն ընկած փողերը նուիրել է Ս. Աստուածածնի եկեղեցու զարդերի համար, նոյնպէս և եկեղեցին սուղեղու համար նուիրել է 200 ռուբլի, իսկ նրա մահուանից յետոյ նորա եղբայրը քրոջ յիշատակի համար նուիրել է 150 ռուբլի:

ՆՈՐ-ԻՍՐ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Երիտասարդ Չեմերը՝ Աւստրիոյ Արդարութեան գործոց նախարարը դատի ենթարկելու համար՝ ամբաստանութեան ծրագիր մը ներկայացուցած էին Աւստրո-Հունգարիոյ Երեսփ. Ժողովոյն. այս ծրագիրը նկատողութեան չ'առնուեցաւ:

— Պերիցի արքայական պալատան հրապարակը կերպարանափոխ ընելու համար պարգևատր փոխառութիւն մ'ընելու ծրագիրը մերժուեցաւ Բրուսիոյ նախարարաց խորհուրդէն:

— Բրուսիոյ ներքին գործոց նախարարութիւնը նոր շրջաբերական մ'ուղղելով՝ գաւառական իշխանութեանց, յանձնարարած է բնաւ աչառութիւն չ'ընել արգելեալ գրեանց մուտքին մէջ:

— Ֆրանսայի մէջ ժառանգական հիւանդութեան մը մատնուած 25 ամեայ երիտասարդ մ'իւր մօտալուտ մահը տեսնելով, իւր հարստութենէն 2 միլիոն ֆր. ը բարեգործական և մարդասիրական հաստատութեանց նուիրեր և մնացեալն ալ իւր ազգականաց միջեւ բաժնէր է:

— Անգլիոյ ձիարշաւներուն մէջ գըրթէ միշտ սուսընին մրցանակն ստացող Ուէսթմինսթրի դուքսին Օրմ ձին թռնաւորեր են, սակայն անամենաբոյժից հոգածութեամբ պիտի կարենայ առողջանալ: Դուքսը հազար ոսկի խոստացած է չարագործը գտնողին:

— Գերմանիոյ կայսեր անդրանիկ որդւոյն գահաժառանգ իշխանին զինուորագրութիւնը կատարուեցաւ ի Բոցտամ, անցեալ շաբթու կայսերական գերդաստանին և բազմաթիւ հրաւիրելոց ներկայութեամբ: Յետոյ մեծ հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ իշխանին որ կը լրացնէ իւր տասը տարին:

— Ի Լեմասսան, Վիլնայի ռուսական դատարանը վեց Հրէնահիներ և մէկ Հրեայ 6 էն 20 տարւոյ չղթայտկապ աշխատութեան դատաւարտեր է վիժումներ կատարած լինելու մեղադրանք:

— Ուոլայնահաս Ճաք դարձեալ երեւան ելած է, բայց այս անգամ յԱմերիկա: Զիքալոյի մէջ Հուայթաշաիլի ոճրագործին զոհերուն նման յօշոտուած կին մը գտնուեց է:

— Պիզմարի իշխանի որդին Հերպէրթ տը Պիզմարը կոմսը Հոյեոս կոմսին դստեր հետ նշանուեցաւ: Կայսրը շնորհաւորեց Հոյեոս կոմսը:

— Իսպիոյ նախարարապետ՝ Պ. տի Ռուտիէի մայիս 6ին Երեսփ. Ժողովոյ յուզեալ մէկ նիստէն յետոյ նախարարութեան հրաժարականը մատուց թագաւորին որ ի զուր ջանաց զիրենք համոզել: Ուրիշ քաղաքէտք ալ նոր նախարարութիւն մը կազմել յանձն չ'առից. Թագաւորը մինչև իսկ Պ. Քրիստիի դիմեց, որուն պատասխանը դեռ յայտնի չ'եղաւ: Տի Ռուտիէի նախարարութիւնն ընթացիկ գործերը վարելու համար դեռ պաշտօնով վրայ կը մնայ և Երեսփ. Ժողովոյ գումարումը անպայման կերպիւ յետաձգեցաւ: Վերջին լըրոց նայելով Պ. Ճիօլէթթի նախարարութիւնը կազմել պիտի յաջողի:

— Աֆղանստանի մէջ երեւան ելած հնտախտը թէև անհետանալու մօտ է, սակայն դէս ի Ռուսիա կը յառաջանայ եղեր:

— Սերայիոյ մէջ 400 գնչուներ օրթօտօք եկեղեցոյ յարելով մկրտուեցին:

— Պելիա որ մինչև հիմա Բարիզու ժամը կը գործածէր, մայիս 1 էն սկսեալ կրինիչի անգլիական ժամը գործածել սկսեց է, որ 17 վայրկեան աւելի ետքէ:

— Մոնթէ-Քարլոյի խաղարանաց մէջ նորոգ ամուսնացեալ Պելիացի ամուլ մը մէկ երկու օրուան մէջ 120000 ֆր. կորսնցնելով, կտաւով մ'իրարու փաթթուեց և ծովը նետուելով անձնասպան եղեր են:

— Ռուսմանիոյ Էլիզապէթ թագուհին որ Գարմէն-Սիլվա գրական մականունան ներքև այնքան փայլուն աշխատասիրութիւններ արտադրած է, դեռ ևս ծանրապէս հիւանդ է:

— Հունգարիոյ առևտրական նախա-

րար Պ. Կ. Պարոշ մեռնելով, նոյն նախարարութեան գործերն առժամապէս պիտի վարէ ելեմոից նախարար՝ Պ. Վեքերլէ:

— Վիեննայի մէջ «Երաժշտական և Թատերական ցուցահանդէս» մը բացուեցաւ:

— Ռուսիոյ ելեմոից նախարար՝ Պ. Վիլնէկրացի գգալապէս ապաքինիլըսկըսած է:

— Ճաքոնի պետական վարժարանաց մէջ ռուսերէնը պարտաւորիչ պիտի լինի եղեր:

— Ռոչիլսեան դրամատան Յրանք-Փօրթի մասնաճիւղին արկղակալ Ռուտօլֆ Եէկէր, որ կարևոր գումար մը կորցելով փախած էր, Աղեքսանդրիոյ մէջ ձերբակալուեց է:

— Շուէսի թագաւորը որ ժամանակէ մ'ի վեր հիւանդ էր, Եւրոպիոյ մէջ պտոյտ մը կը կատարէ:

— Գարսապի նախարարապետ Պ. Պոցօ Բեթրովիչ Շքօտրա գնացեր է ի փոխադարձ այցելութիւն Շքօտրայի կուսակալ Ապոլիլէէրիմ փաշայի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաեսօնաբաշխութիւնք. — Բաղլայ էֆ. Այալնի և խալիտ պէյ Պրուսայի տէֆթէրտար, Բաշմաքճի զատէ Իպրահիմ Զիւհտի էֆ. Սերաստիոյ նահանգին, Մէհմէտ Թէվֆիկ էֆ. Զարշամպա գաւառակին (Տրապիզոն), Մէհմէտ Սալիկ էֆ. Կարդան գաւառակին (Բաղէշ) և Մուսթաֆա Ֆէվիլ էֆ. Եւրոպիոյ նախ պանուսնեցան:

Ասիանաք. — Կրօնական գործոց տեսուչ՝ Զիվեր պէյի Պալա, Զմիւռնիոյ մաքսային քննիչ՝ Աքիֆ էֆ. ի Իւլա Ա., Պուկարիոյ օսմ. Քօմիսէրին Յրանքերէնի քարտուղար՝ Օննիկ էֆ. Մինիճեանի և Տրապիզոնի վերաքննիչ տեսնի ընդհանուր դատախազ իւլուսի էֆ. Սանիյէ Միւթէմայիզ, Տրապիզոնի նախական դատարանի պատժական ճիւղին նախագահ Ասլմ էֆ. Սանիյէ Բ., Բալուի երեւելիներէն Իպրահիմ պէյի Բալիա և Մկրտիչ էֆ. ի խմբէն աստիճանները շնորհուեցան:

Պաեսուսնեցանք. — Այալնի նորընտիր տէֆթէրտար՝ Բաղլայ էֆ. Մէհմէտիյէ Բ., Բաքէ շրջանակային ընկերութեան տնօրէնին և Տրապիզոնի վերաքննիչ տեսնի պատժական ճիւղի նախագահ՝ Էսատ էֆ. Մէհմէտիյէ Գ., Մեսաթրի շրջանակային ընկերութեան նաւապետներէն Պ. Պերնարի Մէհմէտիյէ Դ., Սամսոնի ռուսական հիւպատոսարանին քանչէլէր Պ. Զօտիցիի և կտաւեղինաց գործարանատէր Պ. Լուի Բուլքի Մէ-

ճիւղից է. պատուանշանները տրուեցան:

Օսար պատուանշանք. — Հեղեղական կառավարութիւնը կրօնական գործոց տեսուչ՝ Զիվէր պէյի Ս. Փրկչի Բ. և Կալացի օսմ. ընդհանուր հիւպատոս՝ Մանուկ էֆ. Ազարեանի Գ. աստիճանները նուիրած է: — Տանխարքայի Թագաւորը Եգիպտոսի խորհրդին Տանէպոֆ պատուանշանին Ա. աստիճանը նուիրած է:

— Թուրքիոյ և Ռուսիոյ միջև կնքելի առևտրական դաշնագրոյն յանձնաժողովը իւր տեղեկագիրն աւարտելով մատուցած է:

— Տրապիզոնի կուսակալին պաշտօնը վաւերացնող կայս. ֆէրմանը երկուշարթի կարգացուեր է հանդիսաւորապէս:

— Դասի պիտի ենթարկուին Բալուի (Տիարալէքի) հարցաքննիչ դատաւոր Իպրահիմ պէյ և Սասայի (Աստանա) հարցաքննիչ դատաւոր Ալի էֆ. զեղծմանց համար:

— Աստիճան և պատուանշան խնդրող առհասարակ ամէն կարգի պաշտօնէից կենսագրութիւններն ալ միասին պէտք է մատուցուին:

— Բաղէի նահանգին մէջ տարափոխիկ հիւանդութիւններ երևան եկեր են:

— Եւթէնի զօրաբանակին համար Ասանա և ձիսէ շոգենաւները զինուոր և զինուորական պիտոյք բեռացուած մեկնեցան դէպ ի Հոսէյոս:

— Անձնապաշտօնի Բըզլէ-Բիլիսէի (Տէրսիմ) մէջ 120 տարեկան մարդ մը ինքզինքը կախեր է. Սասալիւղի մէջ Մէհմէտ էֆ. անուն մարդ մը անձնապաշտօնի փորձեր է, սակայն ազատեր են. Զմիւռնիայէն Պուրնովա գաղղ կառավարման ներքև նետուելով մարդ մը անձնապաշտօն եղեր է:

— Թնդանօրաւանի յատուկ գործիներն ու նիւթերը Եւրոպայէն պիտի բերուին այսուհետև:

— Սեբասիոյ կուսակալը՝ տէֆթէրտարն իրեն փոխանորդ կարգելով քըննական պտոյտի ելեր է:

— Համազգային Անկեղանոցին շինութեան և այլ գործողութեանց վերին հսկողութիւնը խալիլ Բիֆաթ փաշայի յանձնուած է: Հոլանտացի Պ. Լուր Բոլաք 200 ծրար ամերիկեան կտու նուիրած է Անկեղանոցին:

— Պաշտաւէն Պարսկաստան գացող թղթատարական սուրհանդակը Սանգինի շրջակայքը կողպատուեր է: Թէպէտ չարագործք ձերբակալուած, սակայն դեռ պայուսակները չեն գտնուած:

— Օսկար անուն Գերմանացի մը կամուրջին տակէն անցուած պահուէն նաւերու կայմերը պառկեցնելու համար նոր գործի մը հնարած է, որուն համար 15 տարուան մենաշնորհ խնդրած է:

— Այսրնի Մուկլա գաւառի քրոմի հանքն աճուրդի պիտի հանուի կայս. կառավարութեան կողմանէ:

— Զմիւռնիոյ վաճառականներէն Նիքօլիտի 800 ոսկի պարտքով սնանկացեր է:

— Յոյն երիտասարդ մ'անցեալ օր Պոլսոյ կողմը դիմացի տունն անցնելու համար պատուհանէ մը ոստնուէ ուղեւոր, 3 մէթր բարձրութենէ մը սալայատակին վրայ կ'իյնայ ու կը մեռնի:

— Երկրագործական դրամատանց գործառնութիւնները քննելու համար դարձեալ 4 քննչաց անուանումը խընդրուած է Բ. Դրնէն, որ անգամ մը մերժած էր զայդ առաջարկ:

— Սելանիկէն — Տէսէ — Աղան երկաթուղւոյ մենաշնորհին կայս. իրաւունքն ելաւ:

— Ակնայ շրջակայները երկու աւազակներ եւս ձերբակալուեր են:

— Անասուլի երկաթուղւոյ երկաթեայ գծերու գետեղումը մինչեւ էսկի-Շէհլի ամբողջացած է:

— Պեղումայի վաճառականներէն երկու երիտասարդներ Պաքըր-Չայ գետին շրջակայները հրացանով սպաննուած գտնուեր են. խիստ քննութիւն բացուած է:

— Այնուրդի բացերը եօթն ուղեւորով նաւակ մը շրջեր եւ միայն նաւավարը կրցեր է ազատիլ:

— Տօթէօր Վուլֆիլը սպանուելուն դատը երկուշարթի եւ երեքշարթի շարունակուելով Եղեռնադատատեխին տուեւ, Մէրճան և Որիսթօ՝ իբր կանխամտածութեամբ մարդասպան մահուան եւ նաւում ու Նիքօլի իբր զըրդ 15ական տարուան շրջակայակալ Ուլխատութեան եւ քաղաքական իրաւունքներէ զրկման դատապարտուեցան:

— Հէվալէ չպիտի տրուի այսուհետև կառավարական պաշտօնատանց պիտոյք վաճառողաց:

— Զիկալոյի Արուեստահանդէսին՝ ծովային նախարարութիւնը ճարտարարուեստ նաւակ մը, մակոյկ մ'և մանրանկար նաւ մը պիտի զրկէ:

— Եւթիսէի (Իյնէկէօլ) մէջ քանի մը հայ երիտասարդներ վէճ մ'ունենալով, մին սպաննուեր, չորսը վիրաւորուեր և տեղի տուող հինգն ալ ձերբակալուեր են:

— Պուսայի կուսակալ՝ Միւնիլ փաշա Միլիալիճ քննական պտոյտի կերթայ այսօր:

— Պուսա գացած է իտալական դեսպանը:

— Օսմ. կայս. Պանֆայի ընդհանուր տնօրէն՝ Սըր Էսկար Վինսընդ չորեքշարթի Զմիւռնիա ուղեւորեցաւ:

— Ասանայի շէպէլը-Պէրէքէթ գաւառին ընդհանուր դատախազ Սառըք էֆ. ի գէմ բողոքուեր է:

— Սելանիկի Լանքազա գաւառակին շուկայէն նպարավաճառի մը խանութէն հրեհ ծագելով, հակառակ ամէն ջանից շուկան ու կառավարական պաշտօնատունը հրոյ ճարակ եղեր են: Տեսարակներն ազատուած են սակայն: Վնասք ու մարդկային կորուստք յայտնի չեն:

— Սեբասիոյ Տիվրիկ գաւառակին Պալիսիյար գիւղը մօտակայ գետակին յորդման պատճառաւ ի հիմանց խախտած լինելով, ժամ մը հեռու Աղան գետնոյն վրայ պիտի փոխադրուի և

ծախքերն ալ 1308 ի ելմտացուցին վրայ պիտի աւելցուին:

— Պուլկարաց Ֆէնէրի եկեղեցւոյն հիմնարկութիւնը մեծ արարողութեամբ կատարուեցաւ անցեալ կիրակէ:

— Գասապայի մէջ բամպակի գործարան մը այրելով, 3000 ոսկի վնաս պատճառած է:

— Զմիւռնիոյ մէջ սեւ չամիչի առևտուրն այս օրերս մեծ ոգեւորութիւն մը ստացեր է՝ Թրանսայի այգիներուն ցուրտէն վնասուելուն համար:

— Դ. գօրաբանակի կեդրոնին Պաշ Գալէ զօրանոցը հինգած լինելով, ի նորոյ պիտի կառուցուի:

— Աղիւսի գործարանը գոր կը պահէ Մովային նախարարութիւնն ի Չօպան Չէլմէ, Մուսթաֆա էֆ. անուն անձի մը կողմանէ չահաւոր պայմաններով չահագործել առաջարկուած է:

— Պասայի ծոցին մէջ ալ մաքրանոց մը պիտի կառուցուի:

— Սաֆա-Մայնիկէնի իշխանն ու իշխանուհին՝ չաթուս Պուսա երթալէ յետոյ հինգշարթի օր դարձան և երէկ գիշեր կայս. պալատան մէջ հրաժեշտի հացկերոյթին ներկայ գտնուելով, այսօր կը մեկնին մայրաքաղաքէս:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ՄԱՂԻԿ»Ի

Պ. Մ. Յ. ի Կիւմիւլեխանէ. — Ստացանք Ձեր վեցամեայն: Կը հրատարակեմք միայն ինչ որ յարմար կը գտնեմք եւ ինչ որ կարող եմք հրատարակել:

Մ. Դ. ի Մաղնիսա. — Կարող էք նամակադրուիլ զրկել:

Յ. Յ. Դ. ի Գասապա. — Ստացանք Ձեր զրկած երկու վեցամեայները:

Բ. Ա. ի Մաղուան. — Տ. Ղ. ի յանձնարարած էք վճարել մեզ Ձեր բաժանորդագիրը, բայց արդէն ժամանակին վճարած էք զայն: — Մեռեալ կին ին սկզբնաւորութիւնը ուղած էք, բայց ժամանակին զրկած եմք զայն: — Մէքէլլէն հինգ հատոր է՝ իւրաքանչիւրը 10 դահեկան. ծանուցման մէջ 10 ին տեղ 60 դրուեր է սխալմամբ:

Ա. Մ. ի Բաբեղ. — Ե. Ա. պարտի 21 զրուէ և ոչ 9 զրուէ: — Գոհ կը մնայ, այդ մասին տարակոյս մի ունենաք: — Վ. ի թերթ երը արուեստի էք:

Կ. Բ. ի Դըր-Շէնի. — Նամակադրուիլ զրկեցէք:

Ա Ր Ժ Է Գ Դ Ե Ա Մ Ո Յ

Օսմ. լիւրս 100 գրչ. է

Մէճիալէ	108	3 զ. Զ. Զ.	102 20
Քաւարդ մէճիա	107	23 զ. Զ. Զ.	89 35
Մանր մէճիա	101	20 զ. Զ. Զ.	87 21
Մէթալիք	98	10 զ. Զ. Զ.	51 15
Հինգնոց	101	20 զ. Զ. Զ.	110 6
Մանէլ թղթադրամ 8 62			
Գոնալիտէ	22	27 զ. Զ. Զ.	83 3/4
Թահիլ. Օսմ.	83	20 զ. Զ. Զ.	48